



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9(47.925)  
L-55

Hopewell

19 AUG 2011

24 JAN 2006

## ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳԻՐ ՅՕՐԻՆԵԱԼ Յ' Է ԴԱՐՈՒ

Ւ

Հ Յ Ա Գ Ո Յ Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ո Գ Ր Ո Յ

ԵՒ ՀՐԱՏԱՐԵԿԵԱԼ

ՆԵՐԱԾՈՒԹԵԱՄՐ ԵՒ ԲԱՂԴԱՏՈՒԹԵԱՄՐ



Ի Ս Ա Խ Բ Բ Պ Ա Զ Ա Ր

ՎԵՆԵՑԻԿ

1904

4. 8.

9(47.325)

Q-55

## ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳԻՐ ՅՈՐԻՆԵԱԼ Յ'Է ԴԱՐՈՒ

ի

Հ Ն Ա Գ Ո Յ Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Բ Ա Ց

ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ

ՆԵՐԱԾՈՒԹԵԱՄՔ ԵՒ ԲԱՂԴԱՏՈՒԹԵԱՄՔ



Ի Ս Ա Կ Ր Բ Դ Ա Զ Ա Ր

ՎԵՆԵՏԻԿ

1904

11 FEB 2013

5533

12714

հ

ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԻՆԻ

ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՑՈՒԹԵԱՆ

ԱՐՁԻԱՊԱՏԻ ՏԵԱՌՆ

ՏԵԱՌՆ ԻԳՆԱՏԻՈՍԻ Վ.՝ ԿԻՒՐԵՂԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

եր

ԸՆԴՀԱՆՈՒՐԱԿԱՆԱԲԲԱՀՈՐ ՈՒԽՏԻՍ

ՆՈՒՐԻՆ ԽՈՐԻՆ ՑԱՐԳԱՆ ՕՔ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԵԱՅ

Ի ՀԱՅՐԱՍՏԵՐ ՈՐԴԻՈՅ

ԱՌ ՍԻՐՈՂՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ՅԱՐՁԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ



54/  
47

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՅ գրուածս որ ի վաղուց գրաւած էր մեր ուշա-  
զրութիւնը, կը պատկանի՝ ամենայն հաւանականութեամբ՝ ի. գա-  
րու մեր ուսումնասէր նախնեաց։ Եթէ նախնեաց ո՞ր և է գրաւոր  
երկասիրութիւն հնութեան տղագաւ ընդհանրապէս նուիրական ե-  
ղած է յետագայիցս համար, ասոր մասին կրնանք ըսել իրաւամբ, որ  
նաև յոյժ հետաքրքրական է և կարեռ՝ թէ նիւթին նորութեան և  
թէ ընտիր գրութեանը համար։ Խօթներորդ գարէն քիչ բան հա-  
սած է մեզ. և այդ քիչերուն մէջ իսկ անոնք աւելի ուշագրաւ են  
— որպիսիք են Զենոր Գլակ, Սերէս և Պանդ Երէց — որոնք  
պատմական, ժամանակագրական և աշխարհագրական մասնագի-  
տութիւնքը կը ներկայացնեն մեզ չափով մը։ Այս տեսակէն է  
ահա նոյնպէս անանուն գրութիւնս, որ թէև քանակով միւսներէն  
աւելի պղտիկ, սակայն պարունակութեան կողմէն շատ աւելի  
հանրազգային է և ընդարձակ :

Գրուածքիս կարևորութիւնը միայն ասոր մէջ չի կայանար.  
այլ անով իսկ առաւելապէս շահագրգիռ է, զի կը ներկայացնէ  
մեզ նախ հինաւուրց ժամանակագրութեանց անյայտացած մետ-  
ցորդները, և կամ հայեցի թարգմանութիւնքը, որոնց մասին մինչեւ  
այսօր մենք որոշ տեղեկութիւն չունեինք։ Բ. Խորենացւոյ պատմու-  
թեան հետ ունեցած աչքի զարնող աղերսներովը։ Վերջին տեսա-

կէտի նկատմամբ արդէն դիտած և գրած ենք 1903 ամի « Բազմավիպի » Նոյ. և Դեկ. թիւերուն մէջ, ինչ որ կարող էինք դիտել և գրել համառօտիւ։ Խոկ առաջին անսակէտը այս աել պիսի փորձենք բարգաւաճել — ինչպէս որ խոսացած էինք։

Անանուն ժամանակագրութիւնն — ինչպէս պիտի տեսնեն ընթերցողք — զանազան աղբիւրներէ կազմուած խմբագրութիւն մ'է։ Խմբագրութեանն է։ գարուն կատարուած ըլլալն, ըստ իս, առանց երկայութեան է։ Այս բանիս ակնյայտնի ապացոյցները կրկին են։ Նախ որ բիւլանգական կայսերաց և ասսանեան թագաւորաց պատմութիւնը Հերակլով և որմզդեան Խոսրովլ կ'աւարտէ։ Բ. բուրութեան մէջ չկայ. — ըլլայ քաղաքական, ըլլայ եկեղեցական վիպաց և գիպաց վերաբերեալ — բան մը՝ որ յիշեալ գարու պարանակին անցնի։ Այս այսպէս ըլլալով՝ կը հետեւ, որեմն, նախ գիտնալ, թէ որո՞նք են այդ նախնական աղբիւրները։ Երկրորդ՝ թէ ո՞վ եղած է զանոնք հաւաքող և կարգաւորաց չեղինակը, և ինչ կերպով։ Երրորդ՝ թէ ինչ բան յատուի է կամ սեփական խմբագրին։ Թող աւելորդ չհամարուի ըսել, որ այս զիսաւոր կէտերու պարզաբանութենէն պիտի իմացուի գրուածքիս աւելի կամ նուազ կարեւութիւնն ու յարգը։

Մեր բնագրի մէջ՝ առանձին խորագրի ձեռվ նշանակուած առուններէն՝ գատելով — եթէ ստուգիս խմբագրի զրչէն եղած են — չորս եղած են անոր գէթ զիսաւոր աղբիւրները. այսինքն են խորենացի, Անդրեաս, Եշուքիոս և Եպիփան։

Ազրիւրներէս առաջնոյն վերագրուած մասը երկու էջ հազիւ կ'ըլլայ. այսինքն է՝ Ազամէն մինչև Նոյ իրարու յաջորդող նախաջէեղեան նախապետներու ծննդաբանութիւնքը։ Այս բանս անտարակուաելի է. վասն զի Հայոց պատմութեան Ա. Գրոց Գ. զիսուն չետ ունեցած նմանութիւնը ըստական է։ Ապային պէտք է ըսել, որ անանուն ժամանակագրին՝ իր գործին մէջ — այսինքն է՝ երրորդ և չորրորդ աղբերաց վերաբերեալ մասերուն և անոնցմէ դուրս արշաւած և ազգային անցեալ զիպաց վրայ խօսած ժամանակ իսկ-բաղում անզամ Խորենացւոյ դիմոծ և անլէ փոխառութիւններ ըրած է։ Եւ այդ փոխառութիւններէն մի քանիւը արդէն մենք նշանակած ենք « Բազմավիպի » Նոյ. թուով հրատարակած մեր յօդուածին մէջ։ Զատոնք առհասարակ աւելորդ կը համարինք հոս նշանակել, զի աւելի յարմար դաշեցանք բնագրի տե-

լնդրէասին արուածը — որ ամբողջ գրուածին երկու երրորդ մասը կը կազմէ — ամենէն նորը և հետաքրքրականը կարելի է համարել, զի կը խօսի մանրամասնօրէն Նոյի երեք որդւոց և ջրբացեղին վերջ անոնցմէ յառաջ եկած՝ սերունդներու և ժողովրդոց, անոնց բաժանմանց և ստորաբաժանումներուն, հողագնդոյս վրայ գրաւած երկիրներուն կամ ազգաբնակութեանց, լեզուներուն, գրոց և գրից, կղզիներուն և գետերուն, քաղաքներու և լեռներուն, յարանուանակուութեանց, և երբեմն երբեմն ալ բարուց ու սովորութեանց վրայ։ Այսպէս և առանձին կերպով Փաղեկին սկսեալ բոլոր Հրէից նահապետներուն, դատաւորներուն, թագաւորներուն ու մարգարէներուն վրայ մինչև ցկիւրոս, հեթանոսական անցից և անձնաւորութեանց ու իրենց վերաբերեալ պատմական եղիլութիւններովը։

Անանուն ժամանակագրին իրաւամբ, ուրեմն, հարկ դատած էր գիմելու Անդրէասին, զի Եւսերիսոսի քով կարելի չէր գտնել աշխարհագրական այդ պլէյատը՝ փոքրիկ պարունակի մը մէջ ամիսուփուած լակոնաբանութեամբ և այնքան ընդարձակ հմտութեամբ։ Հետեւաբար՝ մենք ալ նոյնքան իրաւամբ պետք ենք հարցնել, թէ ո՞վ էր այդ հին աղդաց և աշխարհաց պատրուուկը պարզող Անդրէասը, որը սակայն անձանօթ մնացած է միջնադարեան ժամանակագիրներուն։ Թէև շատ են այս անուամբ մատենագիրներ, սակայն Անդրէաս Կեսարիոյ եպիսկոպոսին, և կամ Կրետացւոյն համար միայն կրնայ ըսուել՝ որ այսպիսի գործ մը գրած ըլլան։ Հեղինակներէս առաջնորդ ծանօթ է հնոց՝ միայն իրրե մեկնիչ Յովհաննու « Յայտնութեան ». իսկ վերջինը՝ զոր Անանիա Շիրակացի երկիցս կը յիշէ՝ որպէս եղբայր Անտիոքայ եպիսկոպոսին Մանգնոսի, նշանաւոր է Կոստանդ կայսեր օրով՝ յօրինած Տումարովը, որ երկշարիւր ամեց շրջան կամ մեծ լունովն ևս կ'անուանի։ Բայց գիտելով մէկ կողմէն՝ որ այս Կանոնիս՝ գէթ մնացորդը՝ շատ տարբեր է մեր ինդրոյ նիւթ եղող ժամանակագրական քաղուածքէն։ և միւս կողմէն ալ որ յիշուած չէ բնաւ հին ժամանա-

1. Այսինքն՝ նախ ի Զատիկ տեսան խորագրած տոմարական ճառին, և ապա սոյն այս Ժամանակագրութեան մէջ յիշեալ կայսեր գործերը պատմած ժամանակ։

2. Այն է, ըստ Սամ. Անեցւոյն, յամի Տեառն 352;

3. Տես Migne T. 87, p. 789-1444։

կազմաց քով յանուն Կրէտացւոյն ժամանակագրական այսպիսի մի զրուած: Ուրեմն՝ կարելի է ըսել, որ մեր անտառուն ժամանակա-  
գրութեան մեզ ներկայացուցած այդ մասը կամ Կրէտացւոյն  
անյայտացած ուրիշ զրուածի մը համառօս թարգմանութիւն է. և  
կամ վրիտական Անդրէասին վերագրուած է, այլ խկապէս ուրիշ  
անձի մը գործ ըլլալու է: Ենթազրութեանց վերջինն սոյզ լինելով,  
հետեաբար այդ տեղ յիշուած Անդրէասն ալ հաւանօրէն անոր  
թարգմանիչն եղած ըլլալու է. և գուցէ՝ Տարօնի Հոչակաւոր Ա.  
Դապար վանքի գիտնական վանականն ու Ա. Սահակայ աշա-  
կերալ<sup>1</sup>, որ երբեւ հոգեւոր հայր Ա. Շուշանկան՝ ի միամին կ'եր-  
թար ի Վերս, Կ'ըլլար անոր վշտացը միաթար, և մեռնելէն վերջ  
ալ կը գրէր եր և Ա. Խունէի խաչի Պատմութիւնը, Քրիստոսի  
475 թուականէն վերջ:

Սա երկու կէտերս խակ առանց երկբայութեան կ'երեխն, և կարելի  
է ապացուցանել զամանք թէ ներքին և թէ արտաքին փաստերով: Նկատմամբ առաջնոյն՝ զիտել կու տանք, որ բարգատելով անու-  
նուն ժամանակագրութեանն Անդրէասին վերագրուած մասը՝ Հիպ-  
ոլիոսոսի Բոստրացւոյ կամ Պորտուէնացւոյ (Portuensis) անուամբ  
հրատարակուած<sup>2</sup> Chroniconի, կամ ըստ լատ. Liber generationis  
յորջորջուած թարգմանութեան հետ՝ — այսինքն է՝ Ա. Հաստածէն  
(Sect. I) մինչև ՃԲ. Հատածը (Sect. XII) — բառ առ բառ  
նոյն և իրարու յարեւ նման գտանք: Այնպէս որ տեղ տեղ երկու-  
քին մէջ եղած տարեթիւերու, յատուկ անուանց, և ուրիշ տար-  
բերութիւններով հանդերձ, կրնանք ձեռքի զրածի պէս ըսել, որ թէ  
հայն և թէ լատինը մի և նոյն զրածի յունարէն բնագրէն թարգ-  
մանուած են անտարակոյս: կամ լաւ ևս խմբագրուած այլ և այլ  
ժամանակներում: Հիպոլիտոսի յոյն բնագրին արդէն ի վարուց  
անյայտացած է դժբաղդաբար: Հայերէն թարգմանութիւնն ակ-  
ներեւ կը տեսնուի անոր երբեմնի գոյութիւնը. վասն զի աշխարհա-  
գրական յատուկ անուանքը ոչ միայն յունական ձեռվ զրուած են,  
այլ յաճախակի նաև այն լեզուին և զրութեան յատուկ եղող շեշ-

1. Տես. Հ. Ալիշանի Հայապատում, տպ. Վենետիկ 1901, Պատ-  
միչք Հայոց, եր. 153-154:

2. Մեր ձեռք եղածն էր Համբուրգի տպգ. յամին 1716: Գինորքի  
հրատարակութիւնը, որ լաւագոյնը համարուած է՝ դժբախտօրէն կա-  
րելի չեղաւ զոնել ոչ վանաց և ոչ ալ Ա. Մարկոսի գրատան մէջ:

առարութեամբ: Որովհետեւ լատին զրչագրերն առանց հեղինակի  
անուան կը ներկայացնեն զայն, և իրարմէ կը զանազանին երեք  
խմբագրութեամբք, ուստի սմանք Ֆրէքի հետ ապրակուսեցան, որ  
սառնք իրօք Հիպոլիտիստի ժամանակագրականին բուն թարգմա-  
նութիւն չըլլան, այլ անկէց միայն օգտուած և անկախ գործեր: Իսկ  
սմանք ալ ի սկզբան շփոթելով Հիպոլիտիստեայ Chronolo-  
giam՝ Զատկ. կանոն կոչուած տարրեր երկասիրութեան մը հետ, տա-  
րակուսեցան Liber generationisի հարազատութեան վրայ: Բայց  
մէկ կողմէն Հիպոլիտիստի հրաշարուեստ անդրիին գանուին ի  
Հոռվմ, որուն պատուանդանին վրայ արձանագրուած է — ի շարս  
միւս զրուածոց հեղինակին — նոյնպէս Խρոնիաց որօց Էլլադաց,  
Աπօδειξէ արօնաց του Πασχα էն, և միւս կողմէն ալ գրութեան բաց-  
որոշ թուականը, այսինքն է՝ Աղեքանզր Վամէայ կայսեր ՃԳ.  
տարին (= 234) որով կ'աւարտի, փարատեցին ամէն տարակոյս: Մեր  
նկատմակէն զուրս կը համարինք այս տեղ ծանրանալ Հիպոլի-  
տիստի ժամանակագրականի և անոր հուատեսակ լատին խմբագրու-  
թեանց ծագման, պարունակութեան և ազբերաց վրայ: Փափագոզ-  
նիրը կը զրկենք Մամունի<sup>1</sup>, Կ. Ֆրէքի<sup>2</sup>, Յ. Դրէզեկէի<sup>3</sup>, Հէն.  
Գէլզերի<sup>4</sup>, Ա. Հառնակի<sup>5</sup> և Բարգէնհաւերի<sup>6</sup> այդ մասին այն-  
քան ձեռնհասութեամբ հրատարակած գործերուն:

ՃԲ. Հատածին (Sectio XII) վերջը զրուած դարագլուխնե-  
րու վերաբերեալ հատուածովը հայերէնին՝ Liber generationisի  
հետ ունեցած բառական նմանութիւնն ու նոյնութիւնը կը զադարի  
— թէպէս և Պարսից թագաւորներու, Պատուեանց, Հրէց քա-  
հանայապեաներու և Կայսերաց ժամանակագրութիւնը զրեթէ նոյն  
կարգաւ կը շարունակուի երկուստեք յաջորդ Հատածներուն մէջ:  
Պատճառն յայտնի է, վասն զի Ակերոսի որգույն՝ Աղեքանզր  
Վամէայ կայսեր 13 տարեթուին — որ նշակուած է լատիներէնի

1. Տես Chronica minora Sae. IV, V, VI, VII, I (Monum. Germ. hist. auct. antiquiss. IX), Berol. 1892.

2. Chronica minora. Gollegit C. Frick, I. Lipsiae 1892.

3. Zum Syntagma in der Zeitsch. f. Wissensch. Theolog. XLVI (1903) 78-80.

4. Sext. Joul. Afrikanus und die byxant. Cronogr. Tl. II. Abt. 1. Leipzig. 1885-4-23.

5. a. a. O. II 4. 149.

6. Gesch. der Altkirch. litteratur, II Band. S. 539-541.

մէջ որպէս վերջին դարագլուխ — կ'աւարտէր Հիպաղողիտոսի քրունիոնի: Աւկայն դիտողութեան արժանի կէտ մ'է և այս զի հայերէնն հոս անմիջապէս յաւելուածով մի ուրիշ դարագլուխ մ'կս կը յարէ այսինքն է՝ Ազեքսանդր Մամէտյէն մինչև Սրկադէսս և Ոնորիս, 177 տարի և մի տմիս, և ձեր Յորէլեան հաշուելով Ազամէն: Ահա այս միջոցին վերաբերեալ մասը կարելի է Անդրէասին ընծայել, եթէ գրած էր նա երբէք ժամանակագրութիւն մ'ալ: Այս աշնակնկալ երեսութովս կը յայտնէ լուելեայն խմբագիրն, որ ինքն ասկէց վերջ ուրիշ աղբիւրներու կը զիմէ վասն զի կամ Հիպաղողիտոս ալ իրեն չէր կրնար ծառայել լիսակէս, և կամ անդին իրեն աւելի նախատակայարմար առաջնորդներ կային: Եւ իրօք՝ երեսութիւն անմիջապէս յաջորդած է գործը. զի Պարսից աքեմենեան թագաւորաց վերաբերեալ մասը ըստ ամենայնի համաձայն է Կեսարացուն, իսկ մասցածին նկատմամբ՝ որչափ որ Հիպաղողիտոսէն կը հեռանայ, այնչափ ալ Եւսեբիոսի (տես Քրոն. Բ. եր. 32–304) կը գուղընթանոյ, թէ և ոչ միշտ և յամենայնի:

Հոռվմէական կայսերաց առաջին ցանկը — Եւսեբոսէն մինչև Լիփիանոս — ըստ որում նշանակուած են իւրաքանչիւրին մահուան տեղին ու եղանակը՝ նոյն է Եւսեբիոսի (Քր. Բ. եր. 36–38) ցանկին<sup>2</sup> հետ. ասկայն անոնց թագաւորութեան և քանից անգամ հիւսկատոսանալուն վերաբերնուու տարեթիւերը — զորս ինամշքով գտած և նշանակած է հայ խմբագիրը՝ անոնց իւրաքանչիւրին հանդէպ, բոլորովին կը պակսին Եւսեբիոսի ժամանակագրութեան գէթ մեղի հասած հայերէն թարգմանութեան մէջ: Իրաւ. է որ կանոնին մէջ նշանակուած են կայսերաց թարգաւորութեան տարեթիւրը. ասկայն այդ տեղ իսկ չենք գտներ նախ անոնց իւրաքանչիւրին քանիցս հիւսկատոս կարգուին: Երկրորդ կայսերքն ևս առհասարակ այդ կանոնին մէջ անցուած չեն: Իսկ անցուածներուն հանդէպ նշանակուած տարեթիւերն իսկ կը տարբերին յաճախ մեր անանուն ժամանակագրութեան առաջին ցանկի մէջ նշանակուածներէն: Հետեւարոր այդ մասը ուրիշ երկու ժամանակագիրներէ փոխ առանուած և լրացուած է, որոնց առաջինը կը համնէր մինչև Այս յաշորդ՝ Անքեմիս կայսրը (?): իսկ երկրորդը՝ մինչև Հերակլ: Եւ այս բարձր յայտնի ապացոյցն այն է, որ Զենոնէն սկսեալ միւս բիւզանդական կայսերաց հանդէպ թագաւորութեան տարեթիւերը միայն կը շարունակուին նշանակուիլ, իսկ հիւսկատոսութեանց ալլ ևս յիշատակութիւն չըլլըուիր:

Սասանեան թագաւորաց ժամանագրական ցանկը — որ կը յաջորդէ անմիջապէս բիւզանդականին — նկատմամբ թագաւորելու տարեթուոց՝ իրաւ. է որ ըստ մեծի մասին կը համաձայնի առ. Աերիոսի (Դապր. Բ.) եղած ցանկին, սակայն մեր ժամանակաշրջանում ցանկի անձանօթ խմբագիրն 45 տարի յառաջ է՝ քան Անանունը (Ատ. Տարօնեցի) առ. Աերիոսի. որովհետեւ որմզդեան խորովով կ'աւարտէ իր ցանկը, մինչդեռ վերջինս կը շարունակէ մինչև Յաղիկերտ վերջինի մահը և Սասանեան հարստութեան բարձումը Արաբացւոց ձեռքով:

Այս ցանկիս կը յաջորդէ անմիջապէս՝ Երսերի ժամանակագրի, խորագրի ներքեւ մի քանի տաղէ բաղկացած հատուած մը, որը այդ հակայ խորագրին ներքեւ այնպէս կեցած է, ինչպէս — ներուի բացասարութեանս — մեծ զիլու. մը տակ՝ կտրատուած անգամ մը միայն: Ասկայն տակէց աւելի զարմանալի է հետագայ երեսյթը. այսինքն է՝ միւս երեսին վրայ խոշոր վերասառութեամբ կը ներկայանայ Եպիփանու անունը, կարծէք թէ կորզել ուզելով Կեսարացիէն այն ամենակարեւոր մասը, որ իրօք անոր ըլլալու բնոյթն ունի: Խաղպան ևս մեծ յայ ունէի, որ սառուզիւ հետաքրքրական այդ մասը Կիպրացւոյն ըլլայ, և թէ աղավ կարելի պիտի լինէր՝ վերայացնել մեծ հայրապետիս ժամանագրական ընդարձակ զրութիւն մ'իսկ, որ կազմէր օրուան նորութիւնը: Բառած է, որ մարդ բարակ թելով մ'իսկ կը յաջողի գուրս ելնել անելանելի բաւզէ մը՝ կծկելով զայն: Իսկ ևս Եւսեբիոսին վերագրուած հատուածի տեղերը որոնելով և գտնելով՝ անոր Քրոնիկոնին մէջ, անով կարացի պարզել նաև Եպիփանին խորագրուած ընդարձակ մասի գաղտնիքը: Այսինքն՝ սկիզբէն մինչեւ Դիսկղետիանոս կոյսրը՝ հայ ժամանակացիրն հետեւած է Եւսեբիոսի, փոխ առ փոխ ամբողջական պարբերութիւններ արտագրելով<sup>1</sup> մերթ Քրոնիկոնի Բ. Ամսէն (այսինքն՝ Կանոննէն), և մերթ Եկեղ. Պատմութենէն՝ յօրինած է գեղեցիկ ամբողջ մը: Ամսաւանդ թէ գուգել ուզած է հեթանոս և քրիստոնեայ աշխարհի քաղաքական և այլ բազմապիսի վիպաց ողիպաց հետ՝ նաև եկեղեցական և գրականական բոլոր կարեւոր անցքերը: Ահա ասով իսկ կը մեկնուի նոյնպէս և այն երեսյթը, թէ ինչո՞ւ համար հայ ժամանակագիրն իր փաքրիկ ժամանակագրականին մէջ կրկին անգամ խօսած է ինչ ինչ նիւթերու վրայ, և

1. Բայտ հայկական հին թարգմանութեան:

մասնաւորապէս Արևմտեան և Արևելեան կայսերաց ևս և սասաւնեան թագաւորաց մասին.

Յոյց առաջ համար ընթերցողին, թէ ինչ չափով գործածածէ կարծեցեալ Եպիփանը՝ զԵւսերիսու. կամ լաւ ևս՝ թէ վերջինս ի՞նչ տեղ կը գրուէ անանունի հայերէն խմբագրութեան մէջ, կը նշանակենք ասոր ամէն մի պարերութեան վերջը՝ Կեսարացու յիշեալ գրուածոց էջերը, ուսկից քաղուած են: Որոնց եթէ աչք մը տայ ուշիմ ընթերցողը, իբր ի հայելով պիտի տեսնէ մեր ըսածի ճշմարտութիւնը: Ո՞վ կը կարծէր որ իշ. դարու գրչի մը ներքեւ այդ կերպով ժածկուած ըլլար Եւսերեայ հին թարգմուութիւնը: Սակայն նոր բան չէ այս միջնադարեան գրուաց համար. զի Գ. Սինգեղրա և որբիներ իսկ այդպէս վարուած են մեծ Կեսարացւոյն և Ամբիկանոսի հետ: Այլ զարմանքն այն է՝ որ ցարդ Ան. Շիրակացւոյն կը արուէր եւ դարու շարագրութիւնն ես:

Եւ սակայն Եւսերիսուէն գուրս ուրիշ անձանօթ աղբւերներ ևս նոյն կերպով ցուցազրուած են հաս, որոնք առաջնոց կը հակասեն յաճախ — նոյն իսկ մի և նոյն անձերու և դիպաց նկատմամբ, — և ունենալու են անշուշտ յատուկ կարերութիւններ:

Մէծն Կոստանդիիանոսէն մինչեւ Կոստանդին Բոգոնատոսի որ դին Յուստիանոս (այսինքն է Յուստինիանոս Բ.) — որով վերջ կը դրուի ժամանակագրութեանս — բիւզանդական կայսերաց վերաբերեալ մասը՝ երթարով տեղի ընդունակուած է կրօնական ինդիրներով: Նաև ջանացինք բիւզանդական պատմչաց և ժամանակագրաց կարգին մէջ որոնել գտնել հայ խմբագրութեան նաև այդ մասի աղբւերները. բայց բազզատութիւնները զբական արդիւնք մը չառին մեզ, և մենք չուզեցինք հեռաւոր աղերսներով զահ ըլլալ: Այսու հանդերձ համոզուած ենք, որ մինչեւ փոքր թէ ողոս աւանդուածներն՝ ուղղակի և կամ անուղղակի կերպով — այսինքն է՝ առհմային երիցագոյն յիշատակարաններու միջոցով — յունական աղբւերէ քաղուած ըլլան: Իսկ մնացածը — մասնաւորապէս եկեղ. պատմութեան վերաբերեալ տեղեկութիւնները — ըստ մեծի մասին անտարակոյս Զ. և Լ. դարու առաջն կիսում գրուած ասորի և հայ այնակախ յիշատակարաններէ հաւաքուած են, որոնք միաբնեաց կուսակցական ոգւովը առգորուած, կոմակորուած և պատմական ստուգութիւնէ զուրկ են: Այսպիսի են, օրինակի աղագու, Պատմ. Երուսաղմէի կոչուած աղբւերն, ուր այլ ընդ հրաշքներ կաստարուած կը պատմուին յԵրուսաղմէմ, Յուսու

տիանոսի օրով, և Քաղկ. ժողովի պատմութիւնը, ուր իբր թէ Սիմէոն Սիւնակեաց՝ կրակը ձգած և այրած ըլլայ ստորագրութեան համար իրեն զրկուած Դ. ընդհանրական ժողովի վճիռը: Այսպէս և Տիմոթէոս Ազեքսանդրացւոյն և նմանեաց հալածուելուն պատճառաւ Լեռն կայսեր ժամանակ երեցած երկնասաստ բարկութեան ապրափելի նշաններն և արևմտեայ զօրայ կրած տհագին կոտորածը, Փլարիանոսի և Պրտաերի մահուան յեղաշրջուած պատմաքն՝ այլովք հանդերձ: Յովհաննէս Անտիպացին ևս դրած է նման ժամանակագրութիւն մը, Յուլ. Կեսարէն մինչև Զենոն կայսրը. բայց ամբողջ բնագիրը մեզ հասած ըլլալով, չենք կրնար գատել՝ թէ ասկէց ի՞նչ աստիճան օգտուած է հայ խմբագիրը, ինչպէս նաև կայսերական կոչուած զիրքի յայն կամ ասորի բնագրէն:

Ցիրաւէի, ընթերցողն ինքնին պիտի տեսնէ անհաւասարի կամ ատպրեր աղբերաց գոյսւթիւնը, եթէ բազզատէ միայն կայսերաց վերջին ցանկը՝ առաջինի հետ: Այս ցանկի մէջ յիշուած չեն հռովմէական կայսրներէն շատերը — որոնք տուաջնոյն մէջ նշանակուած են չափազանցօրէն իսկ. ինչպէս օր. իմն, Լեռն մեծին իբրեւ յաջորդ Անրելիս որ. — և բիւզանդական երեքէն չորս կայսերք ևս մուտք գտուած են, և ոմանք ալ (օր. իմն, Յուստիանոս Ա) կրկնուած: Բ. թէ Արևմտեան և թէ Արևելեան կայսերաց վարած թագաւորութեան տարեթիւներէն շատերն ընդհանրապէս չհաւատալի կերպով կը տարբերին<sup>1</sup> Ա. ցանկի մէջ եղածներէն, և ոմանցն ալ իրարու հետ ի միստին հաշուուած: Գ. Գիտել կուտանք, որ այս ցանկիս խմբագիրը՝ առաջնէն շատ տարիներ ետքը ապրած և գրած է: Այս բանիս յայտնի ապացոյցը նաև ինքն առւած է մեզ արդէն, զի ոչ միայն կ'արձանագրէ նաև Կոստանդին Գ. ի որդին Յուստիանիանոս, — վրիպակաւ թագաւորել տալով անոր երկու տարի միայն. — այլ և Խաղբաց արշաւանքն, ու Հայոց, Վրաց և Ազուանից վրայ տիրապետելը՝ ի թու. Հայ. Ճ. Վ. = 685. — զոր և կը գնէ իրց վերջակէտ իր գրութեան:

Ուստի ամիսիելով մեր մինչեւ հս ըրած դիսուրութիւնները՝ կրնանք եղբակացնել, որ մեր հրատարակած անանուն ժամանակա-

1. Այս նկատմամբ գիտել կուտանք սակայն, որ վերջին ցանկում հռովմէական կայսերաց թագաւորութեան վերաբերեալ տարեթիւնը Եւստերիսուի քրոնիկոնի կանոնին մէջ նշանակուածերուն աւելի կը համաձայնին, քան Ա. ցանկին մէջ եղածները:

գրութիւնը՝ հինգէն վեց աղբիւրներէ բաղկացած է։ Եւ են Ա. Ա. Խորենացի, որուն կը վերաբերին, բաց ի առաջին երկու երեսներէն, ուրիշ մասնական շատ տեղեր և տեղեկութիւններ ես, որ ցիր և ցան կը գտնուին Եպիփանին վերագրուած՝ մասին մէջ՝ մինչեւ Զենոն կայսրը։ Բ. Հիպատիոսու՝ Անդրէասի խմբագրութեամբ։ Գ. Եւ սերիսն՝ որուն — բաց ի Եպիփանին ընծայուած ընդարձակ մասէն — հատուածները կը վիստան նոյն իսկ գրեթէ ամբողջ գրուածին մէջ։ այսինքն է՝ սկիզբէն մինչեւ Լիկիանոս եղող միջոցում։ Դ. Արիիկանոս՝ որուն հատուածները յաճախ երեան կու գտն ուղղակի թէ անուղղակի կերպով, չգիտեմ — առաջին և երկրորդ մասերու մէջ, և մենք դիտմամբ նօարագրեցինք։ Ե. Վեցերորդ դարու անփաշտօնական զրուածներ, զրու կարելի է մասամբ Մարտուքի եպիփուապոս Փիլուքսենին և Տիմորես Աղեքսանդրացոյն վերագրել. այնու մանաւանդ՝ որ երկուքն ես ի նախնեացմէ թարգմանուած կ'աւանդուին և մեծ ընդունելութիւն գտուծ միաբնակ կու սակցութեան պաշտպան Հայերու մէջ։ և մասամբ ալ Կայսերական զրոց ընդարձակագոյն խմբագրութենէն, և յիշեալ զրու հայկակարաններէ։

Հիպատիոսուի թարգմանողն եղած է՝ հաւանօրէն՝ կամ Ե. դարու մեր թարգմանիչներէն մին, այն է Անդրէաս Տարօնեցին, որը ի վեր անդր յիշեցինք. և կամ Անանիա Շիրակացին։ Առաջին ենթագրութեան, իրաւ. է՝ որ դրական փաստեր չունինք, բայց և այնպէս կան հաւանական պատճառներ այգակէս կարծելու։ Նախ որ գրչագիրներու մէջ յիշուած է այդ անունը որպէս ազգային ժամանակագիր, երբեմն Ա. Խորենացոյ հետ զուգուած և երբեմն ալ Ան. Շիրակացոյ<sup>1</sup>։ Բ. Քանի որ ապացուցուած է՝ որ անանուն ժամանակապատճառներն այն մասը Հիպատիոսուի է, շատ աւելի բանաւոր է որ գործն ալ հայազգի Անդրէասէ մը թարգմանուած ըլլայ։ Գ. Այդ գրուածի թարգմանութեան հնութիւնն և գործածութիւնը առհմային պատմագրաց և հին մեկնչաց քով։ Դ. ինչպէս տեսանք, այդ մասին վերաբերեալ կայսերաց ցանկին մէջ Անթեմիս ևս յիշուած է իրը կայսր, որը բիւզանդական ժամանակաւ գիրներն այնպէս չեն ճանչնար. և որ աւելի նշանակալից է՝

1. Տեր Յուց. գրչգ. Վիեննայի. Եր. 829, ուր թիւ 376 Հաւաքածոյին մէջ « Անանիա և Անդրէաս բազմավէպ գրութեամբ ճառեցին » (վասն ժամանագրութեան)։

Զենոնով կը դադրին հիւագտասոսութեան յիշատակութիւնք, և յաջորդ կայսերք ամէնքն ուլ սոսկապէս թագաւորած տարեթիւն բավլ միայն կը նշանակուին։ Այս անակնկալ փոփոխութիւնէս կը հետեւի՝ որ Զենոնով — որուն ժամանակը կ'ապրէր Անդրէաս տարոնեցին — կ'աւարտէր կայսերաց ցանկը իսկ մնացածն յետագայ մէկու մը ձեռքով շարունակուած է մինչեւ Հերակլ։

Իսկ գալով Եպիփանեան խմբագրականին՝ գիտել կու տանք, որ այդ անունն — եթէ պարզապէս ընդօրինակողաց ձեռքով յետոյ ուրեմն գրուած չէ Ժամանագրութեան վերջին մասին վրայ — հարկ է անոր ևս նմանօրինակ նշանակութիւն մը տալ. վասն զի ինչպէս ամէն երեսոյթ՝ այսպէս և այս ունենալու է իր յատուկ պատճառը։ Արդ՝ ըստ իս աւելի բանաւոր է յատկացնել այդ անունը Կիպրացին աւելի — ուսկից երկու վկայութիւններ միայն մէջ կը բերուին և ոչինչ աւելի — կամ Ե. գարու առաջին կիսում ապրող Գլակայ վանից առաջնորդին և Մամիկոնէից եպիսկոպոսին, զոր իրը աստուածաբան կը տանէր Եպր կաթողիկոս ի ժողովն Կարնոյ. և կամ Եպիփան Կիպրացւոյն ընծայուած՝ հայկական խմբագրութեամբ՝ մի անփաւեր գրութեան հեղինակին, որը կարելի է նոյնացնել Գլակայ առաջնորդին հետ։ Որչափ որ ալ պատմական փաստեր կը պակախն առ այս, սակայն մէկ կողմէն Ա. ցանկին մէջ Զենոն կայսերէն մինչեւ Հերակլ։ Եպածական միաւ կողմէն ալ Եպիփան Կիպրացւոյ ի սկզբնագիր արարածոց Եւյաւետարանական քարոզութեանց՝ որ ըստ Պուլայ<sup>1</sup> Խորագրուած հետաքրքրական գրուածին հայեցի ընտիր թարգմանութիւնը՝ հայկական իրաց մասին եղած շահագրգիռ յաւելուածներով — որոնցմէ օգտուած է ապա Ժամանակագրութեան խմբագիրը — կը թուին հաստատել գայդ։

Գործու չի ներեր մանրաւմասնօրէն նշանակել սակէց առնուած բոլոր այն տեղերը. բայց կրնամ ըսկել, որ կայսերաց վերջին և ընդարձակ ժամանակագրականին մէջ ագուցուած եկեղեցական

1. Այս գրուածիս հայերէն թարգմանութեան մի միայն օրինակ հասած է մեզ կամ ծանօթ է, այն է թիւ 1649. գրչգ. որ կը գոնովի

Վասնաց Մատենագրարանին մէջ։ Իսկ արաբական և եթովպական թարգմանութեանց հրատարակութեանց վերաբերեալ տեղեկութիւնքը ուս Հ.

8. Տաշեանի Ցուցակը։

Հնաւանդ տեղեկութեանց այն ինչ ինչ մանրամասնութիւնքը, որ Եւսերիսի քոլ չեն գտնուիր, կամ ուղղակի կեսարացիէն քաղաքած չեն, այդ գրուածէն ըստ մասին օժանդակուած կ'երեխն: Այս բաշնիս մի ուրիշ ապացոյց կրնայ համարուիլ եւ չետեւալը. այսինքն, թէ Եպիփանին ընծայուած Այսարածոց մեկնորեան հայերէն թարգմանութեան և թէ մեր անանուն ժամանակագրութեան մէջ կը գտնուին Մ. Խորենացիէն զանազան փախառութիւններ՝ միենոյն իրաց վրայ: Ուստի կրնայ մակաբերուիլ՝ որ նոյն իսկ առաջնոյն միջոցով ինչ ինչ բաներ անցած ըլլան վերջնոյս մէջ: Վերջապէս այս կերպով կը մեկնուի ոչ միայն Եպիփան անուան՝ այդ մասին վրայ արձանանալուն, այլ եւ կայսերաց ժամանակագրակոմն կրկին ցանկ'են իւրաքանչեւրին՝ եռակի աղբիւրներէ խմբագրուած ըլլալուն և ժամանակին վերաբերեալ գաղտնիքը:

Հուսկ ի վերջոյ կը մնայ գիտնալ, թէ ո՞վ եղած է անանուն ժամանակագրութեան վերջին խմբագրը, որ ժամանակաւ իրարմէ տարբեր այդ աղբիւրներն ու մասնական խմբագրութիւնքը հաւաքելով ի մի ձուլած է և ամբողջ մարմին մը կազմած. և թէ ի՞նչ պատճառով և պարագայի մէջ:

Արդ՝ յետ ուշի ուշով և խղճամիտ քննութեանց՝ ես իսկ այն եղբակացութեան յանգեցայ, որը Հայկ, բասարանի յօրինողներէն սկսեալ ուրիշ շատեր ևս մակաբերած էին. այսինքն թէ՝ Անանիա Շիրակացին ըլլալու էր այն, և Հայոց շարժական տոմարը ուրիշ ազգաց պէս անշարժ կամ հաստատուն գործելու նպատակաւ գրած: Ահաւասիկ իմ փաստերը: Կախ և առաջ հաւատարիմն ու հաւատապատմէ՝ մեր պատճաց մէջ՝ Ա. Ասովիկ<sup>1</sup> բացորոշ կերպով ոչ միայն Շիրակացւոյն կ'ընծայէ այդ գրութիւնը, այլ և Տօմարէն կը զանազանէ, հետագայ խօսքերով. « Իսկ Անաստաս (կթղ.) խորհեալ Հայաստանեաց կարգել տօմար անշարժ, բատ այլոց ազգաց, և հրամայէ Անանիայի Շիրակացւոյ կարգել զբրոնիկոն հրաշազան, յորում դումար մեր կարգեաց անշարժ: Եւ Անաստասոյ խորհեալ ժողովով և եպիփառուաք հաստատել զբրոնիկոնն՝ վախճանի<sup>2</sup>, կեցեալ ամս վեց »: Ասկէց զատ նաև պատճութեան Ա.

1. Տպ. Պարիզու 1858, էր. 101:

2. Ասկէ կը տեսնուի՝ որ Անաստաս կաթողիկոսի օրով պաշտօնաւ կան հմտատութիւն չգտաւ Անանիայի տումարը: Այս բանիս բացայաց կերպով կը վկայէն նաև Յովհ. պատմաբան կաթողիկոս, Կիրակոս և Վարդան պատմիչ:

գլխում երկիցս կը յիշէ զայն՝ իր Ժամանակագրութիւնէն մէջ բերած մէկ տեղովը: Մենք չենք գիտեր, ստուգիւ և մանր պարագաներով, որ Ներսէս Բ. կաթողիկոսէն կամ լաւ ևս հայ թուականը հաստատուած օրէն մինչև Անաստասի կաթողիկոսութեան ժամանակ՝ որքան խոտրած էին Հայք արևմտեայցմէ իրենց շարժական տոմարով. և թէ ինչպիսի շփոթութիւնք տեղի ունեցած: Ապային պէտք է ըսել, որ զանիկայ ուրիշ ազգաց անշարժ տումարին համաձայնեցնելու համար՝ հարկ էր անհրաժեշտ, որ Անանիա նշանակէր ճշգութեամբ, աշխարհի ստեղծումէն կամ նախամարդէն սկսեալ, մինչև իր օրերը իշխաղ այդ ազգաց և թագաւորաց, երեւլի անցից և մարդկային պատճութեան մէջ զարագլուխ կազմող վիպաց ու զիպաց ժամանակը կամ տարեթիւերը: Առանց հանրագրային ժամանական այս շրջանակին՝ տոմարը լոկ մակամտածական բան մը պիտի ըլլար: Բայց զանիկայ կազմելն իսկ դիւրին բան չէր: Հետևաբար նո պէտք զգաց դիմելու այն հնագոյն և հաւատարմագոյն աղբիւրներուն, որոնք արդէն ոչ միայն հայկական թարգմանութեամբ մատչելի գարճած էին Հայոց, այլ և մեծ հեղինակութիւն և վարկ ստացած անոնց մէջ. և նոյն իսկ հայկական հին յիշատակարանաց:

Բ. Ինչպէս տեսանք, անանուն ժամանակագրութիւնը կ'աւարտի ի թու. Հայոց ՃԼՒ, այն է՝ յամի Տեառն 685: Իսկ որովհետեւ Ամ. Անեցիէն գիտենք, որ այդ թուականէն վերջ իսկ գեռ կ'ապրէր Անանիա՝ Հայոց մեծ գիտնականը. ուրեմն հետեւութիւնն յայտնի է:

Գ. Ժամանակագրութեանս ներքին փաստերն իսկ, որպիսիք են լեզուական նմանութիւնք, զանազան իրաց վերաբերեալ պատճական ակնարկութիւններ և ամբողջական կաորներ իսկ, որոնք սերտ առնչութիւն մը կը հստատեն մեծ Շիրակացւոյն ճառական, տոմարական և պատճական միւս գրուածներուն հետ: Օրինակի աղազաւ, զիմանը դարագլուխները — Ազամէն մինչեւ ջրհեղեղ, և անտի մինչեւ Քրիստոսի ծնունդը — զորս կը նշանակէ այս տեղ, նոյնութեամբ կը գտնենք նաև իր Տոմարին մէջ: Այսպէս նաև 72 աղգերու յիշատակութիւնն և ի մասնաւորի 12 աղգերու անուանակոչութիւնքը՝ որոնք գպլութիւն և գիր կը գործածէին ի հնումն, նոյն է երկու գրուածոց մէջ ևս: Յովհեպոսէն առնուած մէկ տեղին, ուր կը պատճուի յաւուրս Պենտակոսէից Երուսաղէմի տաճարին մէջ կատարուած մեծագորդ հրաշքն և

բարբառը. « Գնամք ասոի, գնամք » այլովք հանդերձ, մէջ բերուած է՝ բառ առ բառ՝ նոյնպէս Անանիա Շիրակացւոյ թաղազս Յայտնուրեան և Ծննդեան հարազատ ճառին մէջ։ Յուստինիանոսի թագաւորութեան 34 տարին կարգեալ Աղեքսանդրացւոց իննեւտասերեկին վերաբերեալ տեղեկութիւնը, նոյն ժամանակ ապրող Հռովմայ հայրապետին « Բնդիդիս » ի (Բիգիլիս կամ Վիգիլիոս) անուան միւնոյն ձեռվ յիշատակութիւնը, Յուլ. Կեսարի ձեռքով Հռովմայ « Բեսեքիստն » ի (Bissexsti), այսինքն է՝ Լուսացոյցի գիւտը, այսպէս նաև Կոստանդին կայսեր օրով Ա. Խաչի երեման սքանչելիքը, բաղմաթիւ Հրէից և հեթանոսաց դարձը, և այս մասին Երուսաղեմի Կիւրեղ կամ Կիւրոս հայրապետին առ կայսրը զրած նամակի մասին այս տեղ աւանդուածները՝ կը գտնենք նոյնպէս Շիրակացւոյ թէ Յայտնուրեան և Ծննդեան ճառին, և թէ Տոմարին մէջ։ Կան դարձեալ երկուատեք ուրիշ շատ նմանաբանութիւններ ևս. բայց ես չեմ ուզեր աւելի ծանրանալ այնպիսի մի եղելութեան վրայ՝ որ երկայն բարակ ցուցակութեանց պէտք չունի :

Դ. և զօրաւոր փաստ մ'ալ այս է, որ ազգային հնագոյն զրչագիրներէն ոմանց մէջ — որպիսին է Վենետիոյ ԺԹ. Ճառացնաւիրը — այս զրուածս կը յաջորդէ անմիջապէս երեք ուրիշ ճառերու, որոնք Անանիա Շիրակացւոյ անունը կը կրին, և որոնց հարազատութիւնը բնաւ տարակոյս չի վերցներ։ Եւ ազգային ականատես՝ բանասիրի մը վկայութեան համաձայն՝ Եջմիածնայ Մատենագրանի զրչագիրն՝ իսկ կը ճանչնայ, իբր վերջին և ընդհանուր խմբագրող ժամանակագրութեանս, զԱն. Շիրակացի. զի կը խորագրէ այսպէս. « Մովսիսի Խորենացւոյ, և Անդրէսսայ, և Անանիայի Շիրակացւոյ »։ Խորենացին և Անդրէսս (այսինքն՝ Հիպողիտոս) — ինչպէս տեսանք — որպէս ինքնուրոյն և մասնական աղբիւրներ մէջ բերուած են խմբագրէն, բայց ոչ են խմբագիրք. ինչպէս Անանիա ալ չէ ինքնուրոյն աղբիւր։ Վասն զի շօշափելի կերպով ցոյց տրուեցաւ արդէն, որ ժամանակագրու-

1. Մէկ ուշի ուշով աչքէ անցնելով Եջմիածնի Մատենագրանի Գէորգեան ցուցակը, Անանիա Շիրակացու անուամբ խորագրուած ժամանակագրութեան մը չանդիպեցանք։ Հետևաբար կամ գրչագրերը ցանկողին աչքէն՝ վրիպած ըլլալու է այդպիսի մի գրչագիր, և կամ յիշեալ ցուցակը մինուելէն վերջ ստացուած էր այն։

թեան այն մասը ոչ ուղղակի Անանիայի կը վերաբերի և ոչ ալ Եպիփանին, որուն անունը կը կրէ՝ մեզ անյայտ պատճառով։ Ուրեմն՝ Ան. Շիրակացին՝ որպէս ընդհանուր խմբագրող յիշուած է Ժամանակագրութեանս։

Այս բանիս կայ մի ուրիշ գրական փաստ ևս, զոր տուած է երբեմն Յակ. Սիմոնեան Այուրեանց, Մազրասի « Ազգարար » անգրանիկ թերթին մէջ (տես տարի 1795, եր. 191)։ Աս՝ Հնդկաստանի հայկական հին գրչագրաց մասին տուած տեղեկութեանց մէջ՝ կը զրէր այսպէս. « Անանիա Շիրակացին՝ սկիզբն արարեալ յԱրամայ, համառօտ գաւազանաւ իջանէ մինչև ի ժամանակա Անանտասայ կաթողիկոսին »։ Անտարակոյ՝ Այուրեանց տեսած էր իրօք Շիրակացւոյ ժամանակագրութեան գրչագիր օրինակ մը. և իր տեղեկագրածն ուրիշ բան չէր՝ բայց եթէ այդ գրչագիր վերնագիրը։ Հակառակ պարագայում՝ նա պիտի կարող ըլլար ոչ անանուն զրուած մը Անանիայի վերագրել, և ոչ ալ զիտնալ, թէ այդ զրուածն ուսկէ կը սկսէր և ուր կ'աւարտէր։

Հանդէպ այգամն և այսպիսի փաստերու՝ ընդառաջ կ'ենեն երկու գեուարութիւններ, որոնք կը թուին կասկածի ենթարկել զրուածիս Անանիային խմբագրուած ըլլալու հաւաստիքը. Ա. եթէ այդ ժամանակագրութիւնն ստուգիւ Անանիա զրած ըլլար և Հայոց տոմարը յորինելու պատեհաւուր, այն ատեն այդ ժամանակագրութիւնը Քրիստոսի 667–669 թուականէն ասդին պիտի չանցնէր։ Վասն զի Անաստատ կաթողիկոսը — որուն հրամանով զրուած և աւարտուած կ'աւանդուի Տոմարը — այդ միջոցին վախճանած է։ Իսկ ժամանակագրութիւնն՝ ընդ հակառակն՝ կը շարունակէ այդ թուականէն 18 տարի վերջ կատարուած դէպեքերն ևս արձանագրել. և 685 թուականը դրած է անոր իրու վերջակէտ։ Բ. Պատմութիւնը ներկայացուցած է մեզ զԱնանիա Շիրակացին՝ որպէս յունական պարոցի գաստիարակութեամբ և գիտութեամբքը առցեսաւ և յունասէր մէկը, որ կ'ապրէր քաղկեդնեան գաւանութեան յարող կաթողիկոսներու շրջանին մէջ. որ հանած կ'աւանդուի նոյն դաւանանքին ջերմ պաշտպան այնքան աշակերտներ. որը, մէկ խոսքով, իր միւս զրուածներու մէջ այնչափ լիզութեամբ և յարգանոք վերաբերած էր դէպ ի ժամանակակից յունական եկեղեցին. այնպէս որ Քաղկեդոնի գաւանութեան յայտնի ջատագով և մեր բանիբուն մատենակաղիներէն մին անդամ, այն է՝ Գր. Մազիստրոս, առ Գետրոս Գետաղարձ կաթողիկոսը զրած թղթով

մեծապէս կր դրուատէ զինքը և իր ողջամիտ և իմաստագեղ գրուածները։ Իսկ Ժամանակագրութեան խմբագիրն՝ ընդհակառակն՝ իբր ոխերիմ թշնամի կ'արձանանայ — վերջին մասում — յունական եկեղեցւոյն, և մասնաւրապէս քաղկեդոնեան դաւանութեան։ Դարձեալ՝ ոչ միայն կրօս և անվայելուչ լեզու մը կը գործածէ այն ժողովի և դաւանութեանը նպաստող թագաւորներուն և սրբակրօն հայրապետներու դէմ, ոյլ՝ որ զարմանալին է՝ մեծ Շիրակացւոյն անյարմար և իրարու հակասող ափաստանութեամբ երբեմն պատմական ստոյգ եղելութիւններն իսկ, ինչպէս և անոնց զրաւոր վարդապետութեան ուղիղ խմաստներն ևս կը խեղաթիւրէ և երբեմն երբեմն ալ — ինչպէս ըսուեցաւ — շինծու և ստացօդ առասպեկները՝ որպէս ճշմարիս պատմութիւն՝ միամորքն մէջ կը բերէ կ'ագուցանէ։ Արդ՝ դիտելով որ այս պարագաներս ճշգրիտ հակապատկերը կը կազմեն Շիրովացւոյն, գժուար է, ուրեմն, որ մի և նոյն գրչի և մտքի ծնունդ ըլլան։

Այս գժուարութիւններէս առաջինը մեծ կշիռ մը չունի՝ ըստ իս, եթէ համարինք իսկ՝ որ Ժամանակագրութիւնը՝ Տոմարին հետ մի և նոյն միջոցին գրուած ըլլայ. վասն զի ժամանակագրութիւնն այնպիսի մի բան է, որ անոր հեղինակը կարող էր 669 թուականէն տարիներ վերջ հանդիպած գէպքերն ևս անոր մէջ նշանակել, ցորչափ ինքը կ'ապրէր։ Եւ Սամ. Անեցւոյ վկայութեան նայելով՝ Անանիա 712ին իսկ գեռ կենդանի էր։ Թէ այսպիսի գործողութիւն մ'իրօք իսկ կատարուած է, յայտնի ապացոյց է բիւզանդական կայսերաց առաջին ցանկին՝ վերջի շրջանին՝ երկրորդին ունեցած ժամանակագրական տարրերութիւնը — եթէ երկուքն ևս Անանիայի ձեռքով խմբագրուած են. վասն զի չերսակլէսով՝ այն է՝ Քրիստոսի 641 թուականին կ'աւարտի այն. իսկ այս՝ 685ին։

Իսկ գալով երկրորդ գժուարութեան՝ ևս իսկ կը խոստավանիմ, որ խիստ ծանրակշիռ է և գժուարալուծանելի. այնու մանաւանդ, որ տոհմային պատմագրաց՝ Անանիայի մասին աւանդածը ոչ ինչ բան է. և այն ալ իրարմէ առնուած և կրկնուած։ Երկրորդ՝ որ Շիրակացւոյ այնչափ և ամենազան գրուածներէն քիչ բան հասած է մեզ, և այն իսկ կիսկատար և համանուն Ամենահնեցւոյ և Նարեկայ վանահօր զոյգ Անանիաներու գործոց հետ շփոթուած<sup>1</sup>։

1. Օրին. աղագաւ, նա ինքն կը վկայէ — ի զատիկն Ջեառն մէջ — իր սոսմարին համար, թէ «Եւ գրոշմեցի առանձինն զբնաւ

Եւ սակայն տարակուսի մէջ մնալու համար տարակուսիլը բնաւ ներելի չէ, այլ տարակոյսը լուծելու նպատակաւ միայն։ Ահա այս տեսակէտով կ'ուզեմ արտագրել Սամ. Անեցւոյ մէկ նշանակալից տեղին. «Զժի. Աշակերտքն Անանիայի՝ Հերմոն և Տրդատ և Աղարիս և Եղեկիէլ և Կիրակոս երթեալ յԵրուաղէմ» հաւանեցան երկարնակացն. և ի գարձին ոչ ընկալաւ գնոսա ճըշմարիս վարդապետն Անանիա։ Իսկ նոքա ուր հասանէին՝ զնա ասկին պատճառ հայուղուրեան. զոր մի ոք իշխեսցէ աւել կամ հաշտալոց։ Մեզ յայտնի չէ, թէ ուսկի՞ց առեր է Սամուէլ՝ Շիրակացւոյ այս հնգաթիւ աշակերտաց անուանքն և անոնց Երուաղէմ գնացած ըլլալուն և անոր յարակից միջադէպը, վասն զի մեր նախորդ պատմագրաց քով չի դաշտուիր։ Բայց կրնանք ըսել, որ Անանիայի զանոնք ի գարձին չընդունելու վարկածն — այն պատճառաւ մանաւանդ՝ որ երկարնակ դաւանութեան յարած էին — բոլորովին անոր լուսաւոր մտքին և ներող հոգւոյն հակառակ են։ Եւ իրաւցնէ՝ եթէ պահ մը գիտենք, որ Անանիայի գերագոյն յոյն վարժապետն իսկ Տիւքիկան երկարնակ էր, և սակայն նա եթէ չի խղճեց ասկէց ուսանել բնական և սրբազն գիտութիւնները, ուստի կարելի՞ բան է, որ ինքն՝ ընդհակառակին՝ մերժած ըլլայ վարդապետել առ ինքնի գիմողներուն իր գիտցածն և բուն համոզումը — ենթազրելով իսկ, որ տարրեր ըլլային վերը յիշուած աշակերտաց համոզումներէն։ Ոչ ապագէն Անանիա ինքնին իր վրայ գրած տեղեկագրին՝ մէջ յայտնապէս կը գոչէ։ «Ասէ (Գիրն) Արկ զոսկին իւմ ի սեղանաւորս, և ես եկեալ տոկոսեօք պահանձէմ։ Ապա ոչ արգելի յուրաքէ՝ որք կամկին ուսամել, և ոչ այտունետե արգելից։» Անանիա այդ տեղեկագրին մէջ զառնացեալ

մի մի ամ Շլի, իլ կանոն. որովք զամենայն համարն ըռվանդակեցի Շլի կարգ, և զատի մեկնեցի զմի մի կարգ՝ առ մի տարի»։ Եւ սակայն՝ այսօր այդ իլ կանոններէ բաղկացած Տոմարը ոչ ամբողջապէս հասած է մեզ, և ոչ ալ հասածին համար կրնանք ըսել, թէ իսկապէս Շիրակացւոյն է. զի վանացս երկու օրինակաց մէջ փոխանակ Անանիայի՝ Տումար Հայոց խորագրուած է. և Շիրակացւոյն հետ կը յիշուին ստէպ ստէպ, կամ լաւ ևս մէջ կը բերուին նակ Յովհ. Կողեռն և Սարկաւագ վարդապետներէն և ուրիշներէն ընդարձակ հատուածներ։

1. Տես Փ. Պատկանեան, Մեացուամբ բանից Ան. Շիրակացւոյ, ոպ. Պետերբուրգի 1877. — Հ. Պ. Ալիշան Հայապատում, հո. Ա. Եր. 527-530. ոպ. Վենետիկ 1901։



սրտով կը գանգատի իսկ իր ազգակցաց դէմ, ինչպէս երբեմն Յունաստանին վերագրածող ու ամբաստանուող Խորենացին։ Ահա անոր խօսքերը. « Զի իբրև եկի ի Հայո, բազումը եկին առ իս ի յուսումն, և սուղ ինչ խելամտեալ՝ ոչ մնացին կատարման արուեստիս, թողին զիս և մեկուսացան. և սկսան ուսուցանել՝ զոր ոչն դիտէին, և ոչ էին հասու։ Կեղծաւորք և մնափառք, ցուցանել կերպարանա գիտութեան, և կոչիլ ի մարդկանէ ռաբբի։ Եւ ասեն ի վերայ իմ պարաւան՝ որ յինեն<sup>1</sup> էին յերիշրեալը. և ես ոչ թէ ունէի չարութիւն իբրև զնոսա՝ ի վարդուպեալ և ուսուցանել »։ Անտարակոյ Շիրակունուոյ այս տեղույն վրայ բարձրացացած է Սամ. Անեցին իր շէնքը, ինչպէս ցոյց կու տայ նօտրագրուած խօսքերու համեմատութիւնը։ Եւ կուսակցական ձկումով այդպէս վարուած է Անանիայի յիշեալ տեղույն հետ, անոր վերը յիշած հինգ աշակերտները կասկածելի ընելու իր համախօներուն, և իր համշիրակէն ալ « երկարնակ » դաւանութեան վերաբերեալ որ և է կասկած վարաւակու համար։ Ավայն՝ Անեցի ժամանակագրի գործածած չքմեղանաց այդ բանածել՝ ճիշտ արձագանգն է այն բանաձեխն, զոր Յոհ. կաթողիկոսին հետ ուրիշներ ևս ըրին երբեմն՝ Յովհան Մայրագոմեցին արդարացնելու ձկումով. հետեւաբար՝ անոր նշանակութիւն ևս այնչափ կը զօրէ, որչափ վերջիններու։

Ցայց մենք իրաւամբ դիտել կու տանիք, որ Անանիայի խօսքը « բաղմաց » վրայ է, և Անեցու շեշտածէն տարբեր նշանակութեամբ — ինչպէս կը տեսնուի անոր վերջի խօսքէն իսկ —, և ոչ թէ Հերմոնի, Տրդատի, Ազարիայի, Եղեկիէլի և Կիրակոսի մասին. որոնք Շիրակացոյ իբրև հաւատարիմ ընտրելիներ եղած կ'աւանդուին։ Այս ալ ըսենք, որ Անանիա եթէ ընդդիմութիւն մը ցուցած է զէպ ի յունական եկեղեցին, այս ուրիշ բանի համար չէր՝ բայց եթէ ազգային տոմարի, Զատկի, Ծննդեան և Յայտնութեան տօնից պահպանման նկատմամբ միայն։ Դաւանարանական կետերու մասին՝ ես չեմ յիշեր, որ նա՝ Ան. Անահնեցոյ և այլոց նման ընդդիմաբանած ըլլայ Յունաց կամ Քաղկեդոնականաց դէմ, իր գրուածներէն միոյն կամ միւսի մէջ։ Բան մը՝ որ հազուադէպ համարելի է Զ. և Լ. գարերու մեր շատ մը գրումերու հանդէպ. և հետեւաբար՝ ունի լոելեայն իր նշանակութիւնը. և հասկանալ ուղողը՝ զիւրաւ պիտի մակարերէ զայն։ Այս, կարելի

1. Պատկանեանի օրինակի համաձայն « որք յինքենէն յերիւրեալք »;

է ըսել, որ նա իր այսպիսի չափաւորութեան և համերաշխութեան համար է, որ ոչ միայն համելի չեղաւ թունդ ազգաւերներուն և կոռւարարներուն, այլ և պարսաւուեցաւ և կասկածելի ևս եղաւ իր ժամանակակիցներէն շատերուն։ Այս հակալրութեան համար է, որ պատմիչներէն ոմանք լուութիւն պահեցին անոր մասին, և ոմանք ալ հազիւ յիշատակեցին զինքն ու իր գործերը անորոշակի, առանց տեղեկութիւններ հաղորդելու իր կրօնական գրութեանց վրայ։ Այս պատճառաւ է, որ անոր հանճարեղ տոմարը պաշտօնապէս ընդունելութիւն և հաստատութիւն չգտաւ Հայաստանեաց եկեղեցւոյ մէջ, որով և շարունակուեցաւ շարժականն ու խոսորնակը։ Մէկ խօսքով, այս պատեհաւ է, որ նա ինքն իսկ ողբաց իր ազգայիններուն՝ իր հետ վարուելու տիտուր եղանակը։

Մէկ կողմէն այսպիսի պարագաներ ի նկատի չառնելով ազգային հին և նոր մատենապիրներէն ոմանք, և միւս կողմէն ալ Շիրակունուոյն բանագաղ՝ Անանիայ Անահնեցու ընդդէմ Յունաց գրած ճառերը նախորդին առալով շփոթմամբ, այնպէս կարծեցին և կարծեցուցին, որ իբր թէ Լ. գարու մեր մեծահաւատ փիլիսոփայն եղած ըլլայ անոնց հեղինակը։ Եթէ ստոյգ ըլլար այս ենթագրութիւնը, անտարակոյս պիտի հետուէր, որ Ճամանակագրութեան վերջին մասի մէջ Մարկիանոսի և Պողքերիայի, Փւլարիանոսի և Քաղկեդոնի ժողովին, Լեռնի և անոր Տոմարին, Յուստի ու առանձինութիւն պատասխանականներն ու առասպեկները։

Եւ սակայն իրականութիւնը ենթագրուածէն բոլորվին տարբեր գտանք մենք քննութեամբ։ Զ. Միք. Զամշեան՝ Ան. Անահնեցւոյ յիշեալ ճառերու հնագոյն հաւաքածուն գեռ չի տեսած՝ իրաւամբ կը եղրակացնէր, թէ անոնց մէջ գործածուած լեզուն՝ ոչ թէ Շիրակունուոյ պէս լուրջ և բանիրուն գիտնականին, այլ Անահնեցւոյ միայն յատուկ էր և կրնար ըլլար։ Արդ՝ այս բանս հիմնովին կը հաստատուի այսօր՝ Յովհան Երգնկացոյ ձեռքով հաւաքուած և գաղափարուած<sup>1</sup> վանաց Մատենադարանի թիւ 304

1. Զի նա ինքն այսպէս կը զօրէ. « Կախ քան զմուանել ի գրունս ընթերցման գրոցս, պարտ է մեզ ցուցանել զգիւտ այս պատուական և բարելի գանձուց։ Կուաստ և տկարոգի Յոհաննէս Եղնկայ, և սպասաւոր

(Ե. Գ.) բոլորգիր ընտիր Զեռապրովը: Որչափ որ Երզնկացին իր չաշաբման նախերգանքին մէջ Սանահնեցի վերագիրը տուած չէ Անանիայի, — ինչպէս և սա ալ պարզապէս Անանիա վարդադապետ կ'անուանէ ինքզինքը. սակայն այն բարձրաստիճան հօտապետները — որպիսիք են Պետրոս (Պետաղարձ) կաթողիկոսն, որուն հրամանովը գրած կ'աւանդէ իր առաջին ճառը՝ ընդգէմ երկարնակաց. և Խաչիկ Բ. որուն կ'ուղերձէ վերջինը, ալ ամէն տարակոյս կը փարատեն, և կ'ապացուցանեն միանգամ ընդ միշտ, թէ նա ինքն Սանահնեցին է, և ոչ թէ Շիրակացին: Այս բանիս վրայ ես չեմ ուղեր ծանրանալ, զի փաստը անհերքելի է և ջախջախիչ: Սանահնեցւոյ լեզուն իսկ՝ իր յասուկ ոճով, բառերով և միջնադարեան առումներովը — ինչպէս նաև պատմական իրաց՝ մասին ունեցած վեր ի վերոյ տեղեկութիւններով ու առասպելասիրութեամբ<sup>1</sup> — կը մատնեն զինքը:

Սակայն բան մը՝ որուն վրայ ցարդ խօսուած չէ, և ես կ'ուղեմ շեշտել այս տեղ, է հետևեալը: Սանահնեցին ոչ միայն ընդարձակ արտազրութիւններ ըրած է Շիրակացւոյ ի զատիկ Տեառն, և ի յայտնուրիշն Տեառն ճառերէն, բառացի կերպով, այլ նոյն իսկ ժամանակազրութենէն. սակայն առանց իր աղբերը յիշելու: Այս բանիս համոզուելու համար՝ բաւական է բազգատել անոր «Վասն ժողովոյն Քաղկեդոնի», «Վասն տօնի ծննդեանն Քրիստոսի», և «Վասն երից Սրբասացութեանն» խորագրած ճառերը՝ Շիրակացւոյ յիշեալ գրուածոց հետ. զի Մարկիանոսի, Քաղկեդոնի ժողովին, Յուստինիանոսի, Զենոնի, Անաստասայ և ուրիշ զանազան իրաց մասին երկուատեք գրուած պատմական իրողութիւնները զիրար կ'ընդգրկեն: Իսկ զանոնք պատմելու կերպին մէջ է՝ որ Շիրակացւոյ յիշեալ ճառերէն ըրած բանագրութիւններուն իսկ՝

բանի և իմաստից գրոց սրբոց, ծարաւի յոլով ժամանակաւք, և աշխաթեամբ բազմաւ ստացայ զայս երեք զիրքս, որ են... Առաջին զԱնանիային զշայոց վարդապետի. երկորորդ՝ զԽոսրովկայ թարգմանչի և գհղարդ գիտնականի. երրորդ՝ զՍարկաւագ վարդապետին և զմեծն իմաստասիրի զշաղբատեցոյ »....:

1. Առ այս՝ բաւական է կարդալ անոր «Վասն ժողովոյն Քաղկեդոնի» ճառը, ուր «Հոռվմ թագաւորանիստ քաղաք» էն սկսեալ՝ բուլոր աշխարհ հակաքաղկեդոնեան կը ջանայ ցուցնել — բաց ի նիւզանդինք — երկու էջ լեցնելով թուարկութեամբ անուններու:

կը կցէ Սանահնեցին չափազանցութիւններ : Արդ՝ այս խիստ աչքի զարնող իրողութիւնս ի նկատի առած, մէնք իրաւացի կերպով պիտի կարենայինք հետեցնել, որ անանուն Ժամանակագրութեան մէջ — Մարկիանոսին սկսեալ — բիւզանդական կայսերաց անուանական տարեցուցակին ներքեւ յաւելցուած եկեղեցական այն ձկուումնաւոր տեղեկութիւններէն ոմանք Սանահնեցիէն յետոյ ներմուծուած ըլլան, եթէ Ժամանակագրութիւնը ներկայացնող հին երկաթագիրը 981 թուականին գրուած չաւանդուէր, և կամ Սանահնեցին իր յիշեալ ճառերը այդ թուականէն յառաջ գրած ըլլար: Բայց Խաչիկ Բ. կաթողիկոսին, յամին 1059–1065, ձօնած ուղերձէն գատելով, — որուն կը նուիրէ հեղինակը իր վերջին ճառը, այն է՝ «Պատճառք երից սրբասացութեանն», անկարեի կ'ընէ զայն: Ապա, ուրիշներ, կը մնայ եղագացնել, թէ եղած է երկութիւն հասարակաց աղբիւր մը — հաւանօրէն ասորական պատմուրիւն մը, ուսկից հատուկտիր հատուածներ միայն հասած են մեզ. — և թէ մանաւանդ Շիրակացիէն վերջ իսկ կրնան ներմուծուած ըլլալ իսընդ գրոյ նիւթ եղող հատուածները՝ Ժամանակագրութեան մէջ: Զանոնք ներմուծողն ալ երկու նպատակ կրնայ ունեցած ըլլալ. այսինքն է՝ կամ մեծանուն Շիրակացին հակաքաղկեդոնեան երեցնելու, և կամ հակաքաղկեդոնեան իրողութիւնները պատմութեան մէջ արձանացնելու. և կուսակիցներ վաստրկելու համար. ճիշդ այնպէս՝ ինչպէս վարուած է Սանահնեցին՝ անոր Զատկի և Յայտնութեան վրայ գրած ճառերուն հետ:

Ստուգիւ՝ քննադատութեան խիստ բովին անցնելով Ժամանակագրութեան կասկածելի այդ մասը, յայտաբար նշաններ կը գըտնենք այնպիսի յետուամուտ ներմուծութեանց, ոյք բուն բնագրին հետ չեն ներգաշնակուիր. այլ մանաւանդ երբեմն երբեմն հակասական ևս կ'ընեն անոր ըսածները: Դնենք այս տեղ մի քանի օրինակ: Այս իջում, ուր կը յիշուի Եւտիքէսի մոլորութիւնն և Փլարիանասի՝ եպիսկոպոսաց ժողովով զանի դատապարտելը, հեղինակն — ըստ կարգի պատմութեան — կ'ուղէ տալ նաև տեղեկութիւն մը Գիոսկորսի նախագահութեամբ յԵփեսոս գումարուած երկրորդ ժողովի պատմութեանը, ըսելով. «Եւ գիտացեալ զհակառակութիւնս նոցա երանելին Թէոդոս, հրամայէ՝ կրկին անգամ ժողով լինել յԵփեսոս, և քննել յաղագ Փղարիանոսի և Եւտիքէսի»: Արդ՝ այս տեղ — ժողովական եպիսկոպոսաց անուններէն և Եւտիքէսի քննութենէն յառաջ — իսկոյն խօսքը կը փոխուի Առնի Տոմարին և առ

Փլարիանոս զրկուած ճդ զլխոց վրայ: Այս զրքէս՝ մարմնացեալ թանին Աստուծոյ նկատմամբ մէջ բերուած այլանդակ հատուածը՝ որ այն զրոց բնազրէն իսկապէս օտար է և կերպարանափոխուած, յետոյ ներմուծուած է անտարակոյս: Ասոր յայտնի ապացոյց են նախ՝ անկէց ետքը յաջորդող տեղերը, « Եւ ժողովեցան եպիսկոպոսք երկերիւր, Յորնաղիս Երուսաղէմի », և այլն: Բ: Մարկիանոսի ժամանակ ի Քաղկեդոն գումարուած ժողովին պատմութեան մէջ՝ մի և նոյն զրքէն մէջ բերուած դաւանութեան բանաձեն, որ ասոր հակառակն է, և ասոր կը հակասէ: Վասն զի առաջնոյն մէջ մարմնացիալ թանին երկոչ իերապարանը կամ դէմք կը տրուի, և կուսէն ծնեալն ու չարչարուողն ալ սոսկ մարդ կ'ենթազրուի. իսկ վերջնոյն մէջ՝ Ընդհակառակն մի դէմք, մի անձն՝ միացեալ յերկուց բնութեանց. այսինքն՝ « ըստ աստուածութեան ի Հօրէ, և ըստ մարդկութեան ի կուսէ » կը վարդապետուի: Յաջորդ իջում՝ կը շարունակուի պատմել Մարկիանոսի թագաւորեին և թագաւորութեան երկրորդ ասրին Քաղկեդոնի ժողովը գումարելը: Հաւանօրէն հին բնազրի պայս յայտարարութեանը մէջ « Հրամայեաց լինել ժողովի ի Քաղկեդոն մայրագալաքն Բնիթանացւոց », կը յաջորդէին « Իսկ ժողովեալքն ի Քաղկեդոնն էին վեց հարիւր երեսուն և վեց եպիսկոպոսք, Յորնաղիս Երուսաղէմի », և այլն, խօսքերը: Հետեւաբար՝ այդ խօսքերուն միջանկեալ խորհրդածութիւնները Մարկիանոսի, Պողքերիայի, Փլարիանոսի և Խեռնի մասին, ինչպէս նաև Նեստորը — ժողովէն ընդունելի ընելու համար — աքսորէն յետ դարձնելուն և Յուղայի և Սրբուի նման աստուածային վերահսո բարկութեամբ. սատակելու մասին տեղեկազրուածներն ոչ պատմական ներմուծութիւններ են: Դարձեալ, նոյն իջում՝ սուրբ ժողովէն — Խեռնի թղթի համաձայն՝ հաւատոյ սահմանաձեն առաջարկուելէն և Դիտուրեանց զանիկայ ընդունելէն վերջ՝ բնական էր, որ՝ ըստ հին բնազրին՝ անմիջապէս զրուէր ժողովի ուղիղ դաւանութիւնը և անոր հակառակուաց լուծումը, որ կը սկսի. « Այսպէս խոստվանիմք միարան ամենեքին զջէր մեր Յիսուս Քրիստոս ըստ աստուածութեան ի Հօրէ, ըստ մարդկութեան ի կուսէն », և այլն: Ուստի՝ միջանկեալ ընդարձակ հատուածն, ուր Յորնաղին ընծայուած է հաւատոյ նորօրինակ բանաձեւ մը, թագաւորին՝ զինապես զինուարներ գումարելն ու սպառնալիքը, լուծեալ թէոդորին ձրի ընծայուած ժողովի նախագահութիւնն, և ժողովի դաւանութեան մասին եղած տիմարական խորհրդածութիւնք՝ անյարիր ներմուծութիւնք են:

Եւ այսպիսի ներմուծութեան՝ մի այլ ապացոյց է « յորում կայ յետ սակաւուց » խօսքը, որ դիտմամբ զրուած է՝ այդ ամէն բանէ վերջ, ժողովի գաւանութիւնն ու սահմանը պարունակող հատուածը՝ ցոյց տրուած տեղոյն հետ կապելու և իր կարկատանքը ծածկելու համար : Այս կարգի եկամուտ հասուածներ են Ազեքսանդրիոյ հայրապետին Պոռտերի, և երանելոյն Փլարիանոսի մահուան վրայ յօդած առապեկները. դիտելով մանաւանդ, որ ստոյդ պատմութեան համաձայն՝ վերջինս Դիսուկորոսէն և անոր արբանեակներէն առած հարուածներու տակը մեռաւ, և ոչ թէ երկնից բարկութեանէն հարուածեալ: Քրիստոնեայ ժողովրդոց միաւորութեան և կայսերական սահմանաց անդորրութեան համար հրատարակուած Զենոն կոյսեր Հենուայիլուն հրովարտակի յիշատակութեանէն վերջ՝ կցկցեալ խորհրդածութիւնքը. այսինքն են՝ անով Քաղկեդոնի ժողովը նզովուելուն, և Հոռվմ եղած սաստիկ սովին և երկիրը նեխելու տեղեկութիւնքը — որ մէջ կը բերուին իրը երկնասաստ պատուհաս՝ անոնց կայսերական հրովարտակը չընդունելուն — դիտմամբ ներմուծուած կեղծիք են և կամակորուած առապեկը. որոնց անտեղութիւնն ըմբռնած չէ ներմուծողը, ինչպէս եւ Հենուայիլոնի նշանակութիւնը: Այսոնց քովը զնելու է նոյնպէս Անաստաս կայսերէն Քաղկեդոնի ժողովին տրուած զրաւոր նզովքը, զոր կը շփոթէ Թէոդորոս Մոպսուեստացւոյն և Դիոդոր Տարտոնացւոյն նզովին հետ:

Յուստինիանոսի ժամանակ հանդիպած կրօնական պատմութեան մէջ կան կարկատուած զանազան հատուածներ . բայց ես մէկը միայն կը մատնանշեմ, որը բիւզանդական պատմութեան մէջ չի գտնուիր, այլ Զ. և թերևս աւելի ուշ ժամանակի կցկցանք մ'է: Այսինքն է, Տեառնընդառաջի տօնը փոխելու համար յերտապէմ զրկուած զօրաց բազմութիւնն, արիւնչեղութիւնքն ու տաճարի մէջ գործուած տարապայման հրաշքները. որոնցման սակայն ներմուծողն իր մտադրած նպատակին իսկ հասած չէ. վասն զի վերջ ի վերջոյ կը գասնայ նոյն տեղը՝ զոր ընդհատեց առապեկովը, ըսելով, թէ « Իսկ յետ մահու երանելոյն Մակարայ՝ Երուսաղէմացիք ընդպալան զժողովիլ Քաղկեդոնի »: Դիտելով որ Տեառնընդառաջի տօնի խնդիրը Քաղկեդոնի ժողովին հետ զործ չունի, ինչպէս Յուստին և Մակար հայրապետները՝ Յուստինիանոսի, կ'ըսենք, որ ասկէց աւելի յայտնի ապացոյց չէր կրնար ըլլալ հատուածիս ներմուծութեանը. և թէ բանիրուն Շի-

բակացին գժուար է՝ որ կարկաստած ըլլայ այսպիսի առասպելներ:

Հերակլէսին յաջորդող կայսերաց կատարած կրօնական գործերը պատմական են և միայնա զբանավոր պատմուած: Այս մասին ըսելիք չունիմ. զի Հայոց՝ յունական եկեղեցւոյ հետ ըրած ժողովներն և դաւանաբանական յարաբերութիւններն իսկ անկեղծօրէն յիշտակուած են, այնպէս՝ ինչպէս կը գտնինք իւ դարում հայերէն թարգմանուած հին յիշտակալարանի մը, այն է՝ Ճշդիմուած առ աշխարհուած կամ այլն, գրուածին և կարթագինեցի Լիւրերատու Սարկուագի քոլ: Իսկ պատմելու ընդդիմադրական եղանակը — նկատմամբ Ե. ընդհանուր ժողովին, Մաքսիմոսի, և Մարտինոս, և Ագաթոն և Աւոն քահանայապետաց — գժուար է պատշաճներ Հերակացւոյն, այլ անոր աղրիւրին՝ զոր ուզած է հաւատարմութեամբ մէջ բերել կամ թարգմանել:

Ժամանակագրութեանն մէջ օտար ձեռք խառնուած ըլլալու մի ուրիշ ապացոյց ևս կու տայ հնագոյն երկաթագիրն, ուսկէ ընդօրինակուած է մեր Մատենագարանի լիակատար նօտրագիր օրինակը: Այսինքն է՝ կայսերաց առաջին ցանդէպ իսկ լուսանցքի վրայ կը կրէ — աստեղանիշով — մերթ համառօտ և մերթ ընդարձակ յաւելուածներ: Օրինակիս գաղափարով՝ Հ. Եփրեմ Սէթեամ՝ կը յայտարարէ, թէ տարբեր զրչութեամբ և մանր երկաթագրաւ գրուած էին այդ յաւելուածները: Նոյնը կ'ըսէ, դարձեալ, Յաննէսս Ազեքաննդրոսէն անմիջապէս վերջը զրուած յաւելուածին համար, որ կը սկսի « Հերովդէս սպան զՀերկանոս » բառերով, ոչ թէ լուսանցքի՝ այլ բնագրի երեսը պարապ մնացած միջոցում « մանրագիր յաւելեալ է յումեմիէ » : Կը հետեւ արդ՝ եթէ 981 թուին Քրիստոսի գրուած զրչագրին վրայ եղան այսչափ յաւելուածներ, ով կրնայ երաշխաւորել մեզ, թէ է. դարուն վերջեր և թ. ին մէջ — երբ այնքան շերմ կերպով դեռ կը յուղուեին Հայերու և Յոյներու միջև կրօնական վէճեր — անծանօթ և մոլեռանդ մէկը յաւելցուցած չըլլայ նոյնանմտն և աւելի ընդարձակ բաներ, և նոյն իսկ Անանիայի Ժամանակագրութեան առաջին օրինակներուն վրայ. զորոնք ապա, 981ին, գաղափարովը Անանիայի կողմէն եղած ենթագրելով, և միահետ ընդօրինակելով, լուսանցներէն մարմնոյն մէջ փոխադրած ըլլայ դանոնք: Եթէ հնագրութեան պատմութիւնն և քննաբանութիւնը ի վկայութիւն կոչնք, անոնք ցոյց պիտի տան մեզ, թէ այսպիսի բաներ սոսկ վարկած չեն, այլ սոսոյդ եղելութիւններ՝ մատենագրութեան ամէն

մասնաձիւզերու մէջ: Մեր հին պատմագրութիւններէն սկսեալ՝ մինչև եկեղեցական մատեանք իսկ կրած են, ժամանակի և պարագայից բերմամբ, իրարմէ աւելի կամ պակաս նորամուտ յաւելուածներ: Ես չեմ ուզեր ծանրանալ այնպիսի մի բանի վրայ, որը իսխաս յայտնի է և անհերքելի: Յամենայն դէպս՝ որուն որ ըլլան, և ինչ ալ ըլլան այն կրօնական ընդգիւմաբանութիւններն ու չափազանցութիւնները, մենք ոչ համակարծիք և ոչ ալ պատասխանատու ենք անոնց. այլ միայն որպէս հնութիւն և նախնեաց գործ՝ հաւատարմութեամբ ու ամբողջապէս կը հաստարակենք:

Ժամանակագրութիւնս, իր համառօտ՝ բայց ժամանակագրական կարգաւոր գասաւորութեան և կարեսր իրաց պարունակութեան համար, իբրև հիմն ծառայած է Հ. Պարու վերջին քառորդէն սկսեալ մինչև Ժ. Պարու տոհմային ուրիշ ժամանակագրաց և պատմիչներուն: Հատեր անոր հնութեան վրայ վստահացած միայն, և առանց զանազաններու զուտ պատմականն ու հարազատը անհարազատէն, յաճախ անոր սխալներուն իսկ մանակցեր են: Եւ իրօք, բաղդատելով վերջնոց գործերը առաջնոյն հետ՝ յայտնապէս կը տեսնուի ասոր աղբեցութիւնը անոնց վրայ: Սերիսոփ քոլ Բ. Գարութեան անանուն հեղինակը — որ Ատ. Ասողիկէն տարբեր մէկն ըլլալու յայտարար նշաններ կու տայ — ինչպէս Հայկագունի նահապետաց և պարթե և հայ Արշակունիներու մասին աւանդածներուն մէջ՝ ինչ ինչ տարբերութիւններով հանդերձ՝ Խորենացւոյն հետ սերտ աղբեր ունի, որուն համար եւ անկէ առած կ'աւանդուի. այսպէս ալ կայսերաց և սասանեան թագաւորաց վրայ գրածները Շերակացու Ժամանակագրութեանէն քաղաք է հաւանօրէն: Ասոր իբրև ապացոյց կրնայ համարուի հետեւեալ իրազութիւնը. այսինքն՝ սասանեան թագաւորաց տարբերութիւնը. բաց ի երկու երեքէն — որք կարող են նոյն իսկ ընդօրինակաղէն սպրդած ըլլալ — լաւ կը համաձայնին երկուստեք:

Մ. Կաղանկաստուացւոյ Ա. գրքի Բ. գլուխն ամբողջապէս, որ խորագրուած է՝ «Գիր ազգաբանութեան Յաբեթի և ծննդոց նորին», և Գ. գլխուն ալ կէսը՝ որուն վերնագիրն է՝ «Թէ ո՞ր ազգ են, որ գիտեն զգպրութիւն», ուղղակի այդ ժամանակագրութեանէն քաղաքուած են: Ինչ ինչ անուանց տարբեր ուղղագրութիւնքը՝ մասսմբ գաղափարովաց և մասմբ ալ տպագրութեան վրիպակներ համարելի են. օրինակի աղագաւ, « Ակլիայ (Ակեղիկա) և Խթրակէ » (ի Թրակէ):

Ուկտանէս, իր Պատմութեան Ա. Գրոց Բ. գլխում, թէպէտե «Յաղագս Նոյի» կը ծանուցանէ մեզ որոշակի որպէս աղքիւր զՄ. Խորենացի, ըսելով «Գեղեցիկ իմ յարդարէ զրանս Առվակս ստուգագիւն»։ սակայն համեմատութիւնը ցոյց կու տայ, որ նա ոչ միայն այդ գուշալ, այլ եւ նախորդն ու յաջորդ գլուխները՝ Շիրակացւոյ Ժամանակագրութեան առաջին էջերուն համաձայն — որոնք նոյնակէս Խորենացւոյն տրուած են — կարգուորած է՝ Նոյին յաջորդող եռածիւղ կամ եռնտանի նահապետներու ժամանակագրութիւնը։ Սակայն Կաղանկատուացին շատ տւելի ընդարձակօրէն օժանդակուած է մեր Ժամանակագրութենէն։ այնպէս որ՝ կարելի է ըսել թէ Պատմութեան Ա. Գերքը ըստ մեծի մասին — ըլլայ աղաց և աշխարհաց բաժանումներու և աշխարհագրական անուանակոչութեանց, ըլլայ հոգվմէական կայսերաց, Հայկականց և Սասանեանց վերաբերեալքն — փոխառութիւնք են՝ մերթ Խորենացւոյ պատմագրութենէն և մերթ Ժամանակագրութենէս։ զորոնք երբեմ կրճատելով և երբեմ ալ յաւելուածներով կամ եղանակաւորմամբ մէջ ընդ մէջ կը հիւսէ փոխոխակի։ Կիթ. զլխում մեծին Կոստանդիանոսի և Նիկոյ ժողովի մասին աւանդածները՝ սակայն՝ Խորենացիէն տւելի Ժամանակագրութեանս կը համաձայնին բառացի կերպով։

Յովհան կաթողիկոսի Պատմագրութեան Ա. գրքի Ա. գլխում հազիւ որոշ հետքեր կը նկատուին Ժամանակագրութեանս, ուսկից կրնայ գուշակուիլ՝ որ ուրիշ պարագաներու մէջ ևս օգտուած ըլլայ։ սակայն՝ Բարգրատունեաց գովլարան երրորդ պատմագիրն այնաքան տագորուած է Խորենացիով, որ կը գժուարինք որոշել Ժամանակագրութեանս անոր մէջ թողած ճիշտ բաժինը։

Առ. Ասողիկ՝ կրկնակի նշանաւոր է՝ նկատմամբ Ժամանակագրութեանս, նախ որ բաւական փոխառութիւններ ըրած է ասկէ, և այդ փոխառութիւնները տեղ տեղ այնքան բառական են և հաւատարմօրէն արտագրուած, որ Պատղմեանց անուանքը ուղղողելու ձեւերուն և տարիեթիւերուն մէջ՝ մինչև անգամ իր աղքեր վրիպակներէն խակ գգուշացած չէ — եթէ ընդօրինակողներէն յառաջ եկած չհամարինք այդպիսի վրիպակներ։ Աւելորդ կը համարինք մանրամասն նշանակել այդ փոխառութիւնները, բառական է աչք մը/տալ Ա. Գրքի Ա. զլխում՝ Պարսից աքեմենեան թագաւորաց ցանկին — որ յէջ 23 — և Գ. զլխում՝ Հրէից քահանայապեաներու մասին աւանդածներուն, համոզուելու համար՝ թէ նա ուղղակի իր առջեն ունեցած է Շիրակացւոյ Ժամանակագրութիւնը։

Ուրիշ կերպ անկարելի է այդպիսի բառացի նմանութիւն, բոլոր մանր պարագաներով։

Միայն Հերովդէսի իննեւասներորդ տարին՝ զոր հանդիսացւոցեր է Տիբերի իննեւասներորդ տարւոյն, կը պակսի Շիրակացւոյ քով։ թէպէտե անոր յաջորդող նախագասութիւնն իսկ՝ «Յեսուս օծեալն Աստուծոյ», ըստ մարգարէութեանց որ զնմանէ, գայ ի չարչարանս»։ Երկուստեք նոյն է։ Երկրորդ՝ Ասողիկը միակն եղած կը կարծեմ, որ իր պատմութեան Ա. զլխում երկիցո կոչած է Անանիա Շիրակացին՝ — Որոգինէսի չետ ի միասին — Եւսեբիոսէն և Հրէից բարունիներէն տարբեր կերպով ներկայացւուած գարագլուխ մը որոշելու համար։ այսինքն է՝ Եղիպատոսէն ելնելէն մինչև Սողոմոնի ձեռքով կաստառուած տաճարի շինուաթիւնը։ Ըստ կեսարացի ժամանակագրին՝ 480ին, իսկ ըստ Անանիայի և Որոգինեայ 490ին ըլլալու էր, կ'ըսէ։ Ավաս որ Շիրակացւոյ Ժամանակագրութեան այդ տեղույն մէջ միայն առաջին թիւը «Ն...» մնացած է, իսկ յաջորդն եղծուած։ Պատենադարանիս Զ. Ոսկեփ. թիւ 1091, որ համառօտագրութիւն մ'է, ունի «Ն.Զ»։ Սակայն դժուար է որ այսպէս նշանակուած ըլլար նաև Ասողիկի գործածած օրինակին մէջ։ ապա թէ ոչ՝ նա Եւսեբիոսէն երբեք տարբեր բան մի պիտի չկոչէր, և ոչ ալ կանգ տանոյր՝ հաշուելու և հաւատաելու անոր հշտութիւնը։

Սամ. Անեցի՝ թէկ Անանիայի Ժամանակագրութիւնն որոշակի չյիշեր, ի շաբա իր գործածած աղբիւրներուն։ սակայն խնամոտ բաղդատութիւն մը ցոյց կու տայ յայտնապէս, որ ճանցած էր զայն, այլ և ընդարձակաբար օգտուած անկէ։ Դժուար է այդ փոխառութիւնները ծայրէ ի ծայր նշանակել, անոլ մանաւանդ՝ որ աղոնց շատերը կը գտնուին — ինչպէս տեսանք — Եւսեբիոսի և Խորենացւոյ քով իսկ, զորոնք յաճախ յանուանէ կը կոչէ։ Հետեւաբար՝ մենք կ'ուզենք հոս ցոյց տալ միայն այն մի քանի տեղվար, որոնք գէթ Եւսեբիոսին քով չկան և Անանիայի Ժամանակագրութեան կը համաձայնին։ Յէջ<sup>1</sup> 12-14, Սեմայ, Քամայ և Յարեթի ծննդոց մասին խօսած ժամանակը, կը յայտարարէ նա, թէ «Բայց թողլով զանվաւերսն՝ ի զրոց աստուածայնոց սկսցուք շա-

1. Կոչումները կ'ըլլան Էջմիածնի 1893ի հրատարակութեան համայն։

բագրել »։ Ամկայն համեմատելով Ամուէլի այդ երեք էջերը՝ Ծմելոց Գրքի Ժ. զիսում աւանդուածներուն հետ, կը դանենք առաջնոյն քով այնպիսի ազգագրական կամ աշխարհագրական անուններ, որոնք վերջինիս մէջ չկան և չէին ալ կարող լինել. զի Ծննդոց զրքէն ուշ և հեթանոսական ծագումն ունին։ Այս ամենայն — իրենց յարակից տեղեկութիւններով հանդերձ — Շիրակացւոյ խմբագրութեան Ա. մասէն՝ առնուած են անարակոյս։ Դարձեալ դիտելու է, որ Եւսերիսոի Ժամանակագրութիւնը՝ Կոստանդիանոսի Քանակաթեակովը կ'աւարախ. ուրեմն՝ ասկէց անդին յաջորդ կայսերաց և անոնց ժամանակը կատարուած այն դէպքերը երբ Շիրակացւոյ Ժամանակագրութեան մէջ աւանդուածներուն կը զուգընթանան, մանաւանդ թէ երբեմն երբեմն բառացի կերպով իսկ անոնց հետ կը նոյնանան, սխալած չենք ըլլար, եթէ եղբակացըննք, որ ուղղակի կամ անուղղակի կերպով անկէ օժանդակուած են։ Այս կարգէս են, օրինակի տղագաւ, յէջ 65, Կոստանդին կայսեր և Կիւրեղ Երուսաղէմի Հայրապետի օրով Ս. Խաչի երեսումն յԵրուսաղէմ, յամին 352 Անդրէաս Կրետացու ձեռքով երկհարիւրամեայ շրջանի հաստատութիւնն և Արտեմինի լճերցուածի դրութեան յիշատակութիւնը. որուն համար կը յարէ Սամուէլ. « Յայսմ ժամանակի ասեն լեալ »։ Յէջ 66, Վաղէսին ժամանակակից կը զուին մեծն Բարսեղ, իր եղայրը՝ Գրիգոր և Գր. Աստուածաբանն, և Ներսիսի աքսորն «ի կղղիս»։ Յէջ 71, Մարկիանոսի Հրամանաւ Վաղկեշոնի ժողովն և 636 Հայրապետաց գումարուին։ Յէջ 72, Զենոնի ձեռքով Վաղիեղոնի ժողովին դէմ հրատարակեալ զոււածն ու երկոսասան նզովքը :

Իրաբմէ աւելի կամ պակաս աղերս ունին Ժամանակագրութեանս հետ նոյնպէս Անանիս Անաշնեցի, Արքաւագվարդեա, Վարդան, Կիւրակոս, Միւ. Ապարանեցի և ուրիշ անտիպ հեղինակութիւններ, զորոնք առիթ ունեցեր ենք կարգալու և զիտելու։ Մէկ խօսքով Շիրակացւոյ Ժամանակագրութիւնն՝ այն աղդեցութիւնը ունեցած է ազգային ժամանակիրներու վրայ, ինչ աղդեցութիւն որ ունեցեր է անոր Տումարը<sup>1</sup> յաջորդ դարերու տոմարագրաց նկատմամբ։

Երկու խօսք ալ Զեռագրերու մասին։ Ամբողջական օրինակն որ իրեւ բնագիր ծառայած է հրատարակութեանս, է մեր Աստեմաշարանի թիւ 739 (Ժ.թ. Ճառընտիրը) գրչագիրը, զոր յամին 1836 ընդօրինակած է Հ. Եփրեմ Վ. Աթեան՝ Կարնոյ առաջնորդ՝ Կարա-

պետ վարդապետի հին և մանր երկաթագրէն<sup>1</sup>. որը զրուած է, — Հ. Աէթեանի ըստին համարձայն — Հայոց ՆԼ. Թուականին։ Այս՝ խոր հնութեան կամ լու պահուած ըլլալուն համար, հետեւալը ծանօթագրած է նա իր ընդօրինակութեան վերջը։ « Ծանու աշխատութեամբ պէտք եղեն՝ ընթեռնուլ և զրել զանընթեցանելի տեղին, առ փակոյ ի տամկութենէ, և ծակոտելոյ ի հնութենէ »։ Ընդօրինակողի այս հակիրձ յայտարարութենէն զիւրաւ կարող են ընթեցողք՝ ոչ միայն գաղափար մը կազմել հին երկաթագրի կացութեան վրայ, այլ եւ գուշակել՝ թէ սխալներ ևս սպրզած ըլլան անոր ընդօրինակութեան մէջ։ Եւ իրօք այսպիսի սխալներու թիւը նուազ չէ՝ ոչ միայն յատուկ անուանց, այլ նոյն խոկ այբուրենական թուոց և բառերու ուղղագրութեան մէջ։ Այսպիսի սխալագրութիւններ աւելի զգալի կերպով տեսնուեցան Եւսերիսոի Քրոնիկոնի նախնեաց թարգմանութեան և անկէ փոխառեալ տեղերու բաղդատութեամբ, ինչպէս նաև Հիպողիատեայ Ժամանակագրականաց լատին հին թարգմանութեան հետ ըրած համեմատութիւններէն։ Ամկայն, հանդերձ այսու, մենք ենթադրելով՝ որ այդպիսիք կարող էին հին երկաթագրին խոկ յատուկ մինել — ըստ մասին — չուզեցինք ուղղագրել. որպէս զի հայերէն բնագիրը հաւատարմութեամբ ներկայացուի՝ ինչպէս որ է։

Կան վանացաց գրատան մէջ ուրիշ երկու գրչագրեր ևս, որոնք տարբեր կամ պակասաւոր կերպով կը ներկայացնեն մեզ՝ մի և նոյն զրուածը։ Ասոնցմէ մին — թիւ 1091 — է Զ. Ոսկեփորիկը, նօտրագիր հին և փոքրիկ. որը, բաց ի շատ մը հեղինակաւոր և ամ-

1. Այս գրչագիրս՝ նոյն կը թուի լինել Եջմիածի Մատենագարանի՝ երկաթագիր օրինակին հետ (թիւ 102 ըստ Գէրգեան Յուցակի). որովհետեւ սա ևս Հայոց ՆԼ. Թուականին զրուած Կ'աւանդուի (տես « Արարատ » 1896 թ. Փետր. եր. 96) ըստ Գալուստ Տ. Մկրտչեանի, և կը պարունակէ Շիրակացւոյ ուրիշ ճառեր ևս։ Կէտ մը սակայն՝ որ տարակուտելի կ'ընէ նոյնութիւնը, է հետևեալը. այսինքն՝ թիւ 102 Զեռնագիրն եթէ Աիմէոն Ապարանեցոյ ձեռքով քովէ քով բերուած և կազմուած է, Հայոց ՆԼ. Թուին զրուած աւելի հին Զ-ի մը հետ, ըստ ինքեան պիտի պարունակէր նոյնպէս Շիրակացւոյ Ժամանակագրութիւն ևս։ Եւ սակայն Գալ. Տ. Մկրտչեանի լուութիւնը հակառակը կը թուի հաստատել։ Կարելի՞ է որ Քրիստոսի 1836 թուականէն վերջ նորէն քայլայման և այդ մասի կորստեան ենթարկուած ըլլայ Զ-իրու։

բողջական զրուածներէ, կը պարունակէ եւ հետեւալները. Ա. «Ծնունդք յԱղամայ և թիւք նոցին (մինչև ցլոստանդին Պոգոնա-  
դոս կայսր) . — Բ. Թագաւորք Հայոց ի Նոյէ (մինչև յԱրտաշիր,  
վերջին թագաւոր Արշակունի). — Գ. Հոռոմոց թագաւորք (այ-  
սինքն՝ կայսերք Հառմայեցւոց մինչև ցՓոկաս). — Դ. Դարա-  
գլուխք կամ չափմունք ժամանակաց » (սկսեալ յԱղամայ մինչև ցԱ. Սահակ և ցերկորոր Յաղկերտ<sup>1</sup>: Գիտել կու տանը՝ որ այս հա-  
տուածները քաղուած են, անտարակոյս, ընդարձակ գրուածէ<sup>2</sup> մը,  
և կը կաղմեն Ան. Շիրակացւոյ Ժամանակագրութեան կմախքը:

Իսկ երրորդ պակասաւոր օրինակն է մեր — թիւ 222 — գրչա-  
գերը (Ե. Ճառընտիրն), բոլորգիր: Գրչին Ստեփաննոսի՝ յիշատա-  
կարանը — տարբեր գրով — գրուած է Հայոց ՊԾԱ. Թուակա-  
կանին (= 1402): Այս գրչագիրս կը ներկայացնէ մեզ — 306—424  
էջերում — բաց ի 2. ծանօթութեան մէջ վարը յիշուած Ա. Քերթողահօր վերագրուած ժամանակացոյցէն, յԵլ 12—14, — նաև  
Շիրակացւոյ Ժամանակագրութեան վերջին մասը. այսինքն Է՛ Մեծն  
Կոստանդիանոսէն սկսեալ՝ մինչև Կոստանդին Գի. որդւոյն՝ Յուս-  
տիանոսի երկրորդ տարին, ու Խաղբաց տիրապետութիւնը՝ Աղուա-

1. Այս հատուածս, որ կ'աւարտի հոն՝ ուր վերջացած է նաև Ա.  
Խորենացւոյ պատմութիւնը, մեծ նշանակութիւն ունի պարզելու մի ու-  
րիշ թիւրիմացութիւն: Այսինքն Է՝ մի ուրիշ գրչագրի մէջ — որուն  
վրայ պիտի խօսինք քիչ ետքը — Ժամանակացոյց Մովսիսի վերըո-  
ղահաւրն՝ խորագրի ներքե այդ հատուածը մէջ բերած ժամանակ, ան-  
ծանօթ գրիչ մը երկիցս կը յիշէ նաև Հերակլ կայսրը: Այսինքն՝ մէկ մը  
հաշուելով Կոստանդիանոսի իԱ. ամէն մինչև Հերակլէսի ՓԲ. տարին՝  
ՅԶ. ամ, որով կը կազմուի Խոսրովի մահուան և Խաչին յԵրուաղէմ  
դառնալու դարագլուխը. մէկ մ'ալ վերջը, հաշուելով Աղամէն մինչև  
նոյն թագաւորի ՓԲ. տարին՝ ԾԶ. ամ: Այս յիշատակութենէս թերևս  
հակախորենեանք ուրիշ հետեւութիւն հանեն. սակայն ըստ իս անոր միջ-  
անկեալ յաւելուած ըլլալն՝ այդ պարագաներով իսկ անտարակուսելի է:  
Հաւանօրէն Շիրակացւոյ կողմէն եղած է այդ յաւելուածը, զի համաձայն  
է թէ անոր ժամանակին և թէ գրութեանը:

2. Այդ գրուածը կարելի չէ Սեբիոսի Ա. Դպրութեան հետ նոյն հա-  
մարուիլ. որովհետև հոս կը պակսին Աղամէն սկսեալ մինչ հռովմէական  
կայսերքը: Եւ ոչ իսկ Ասողիկի ժամանակագրութեան հետ, վասն զի  
հոս Հոռոմոց թագաւորները ֆոկասով կ'աւարտին, մինչդեռ Տարօնեցին  
յառաջ կը վարէ մինչև իր ժամանակը:

Նից, Հայոց ու Վյուց: Այն տեսակէտով, որ Շիրակացւոյ Ժամա-  
նակագրութեան՝ Եւսեբիոսի հետ ունեցած աղերսներուն գաղրած  
տեղէն անզին եղած մասը միայն կը ներկայացնէ մեզ զրչագիրս,  
յոյժ նշանակալից է. այսինքն՝ ասով իսկ կրկին կը հաստատուի  
նախընթացաբար մեր յայտնած կամածը, անոր ինչ ինչ կէտերով  
եկամուտ ըլլալու նկատմամբ: Յամենայն դէպս՝ այդ երկու գըր-  
չագիրքն ես — թէս մասնական կերպով — պիտի ծառայեն բնա-  
գրի խանգարմունքը վերականգնելու: Եւ այս նպատակաւ՝ ի ստո-  
րև բնագրին կը գնենք անոնց էական տարբերութիւնները, չու-  
նենալով մի ուրիշ կատարեալ օրինակ: Այդ տարբերութիւններէն  
պիտի իմանան ընթերցողք, արդեօք մի և նոյն բնագրէն յառա-  
ջացած են աղոնք, թէ անկէ բոլորովին անկախ յաղբերաց: Գըր-  
չագրերէս առաջինին, այն է՝ Զ. Ոսկեփորիկի տարբերութիւնները  
կը նշանակուին ԶՈ մենատառերով. իսկ վերջնոյն, այսինքն Է՝ Ե.  
Ճառընտրի տարբերութիւնքը՝ Է՛ մենատառերով, զիմացն ալ փոքր  
թուանիչներ: Բնագրի լուսանցներում գոյութիւն ունեցող յաւե-  
լուածները աստղանշիւ կը գնենք ի ստորև. իսկ մեր յատուկ ծա-  
նօթագրութիւնքը փակագծով կամ տարբեր թուահամարներով,  
եթէ մեզմէ անկախ արգելքներ չըլլան:

Դպրձեալ՝ կը ծանուցանեմ, որ, ինչպէս Ա. Խորենացւոյն՝ այս-  
պէս և միւս հեղինակութեանց վերագրուած մասերում, այն տե-  
ղիքը՝ որք չեն գտնուիր կամ համաձայնիր ասոնց ծանօթ գրուա-  
ծոց և թարգմանութեանց, այլ կամ անծանօթ յաղբիւրներէ առ-  
նուած են, և կամ խմբագրողէն, տարբեր գրով կը տպուին կամ  
կ'ընդգծուին: Հիպակողիստոսի ժամանակագրութեան լստին հին  
թարգմանութեան՝ ասկէց ունեցած տարբերութիւններէն գէթ  
տարբերիւրները միշտ, և յատուկ անուններն ալ ընդհանրագէս՝ փա-  
կածի մէջ տունթեր կը նշանակենք Հ մենատառիւ: Իսկ Եւսե-  
բիոսէն — ըստ հայեցի հին թարգմանութեան և լստացի կեր-  
պով — քաղուած իւրաքանչիւր պարբերութեան վերջը կը նշանա-  
կենք փակագծի մէջ համապատասխանող էջերը, յամին 1818 և  
1877 վենետիկեան տպագրութեանց համաձայն. այսինքն Է՝ Քրո-  
նիկոնի և Եկեղ. Պատմուրեան:

Այս կերպով ծանօթացներով ուշիմ ընթերցաղները Շիրակա-  
ցւոյ անտիպ գործին հետ, ի լոյս կ'ընծայենք զայն, տպագրուած-  
ներն ըստ կարելոյն ամբողջացնելու համար: Մեր գուզնաքեայ աշ-  
խատասիրութեամբը կը յուսանք, միանգամայն, օգտակար ծառայու-

թիւն մը մատուցած ըլլով՝ ոչ միայն մերասեր, այլ և օտար բանասիրաց. զի ասով միջոց և դիւրութիւններ պիտի ունենան՝ թէ նուրանոր ուսումնասիրութիւններ և թէ կատարեալ հրատարակութիւններ ընելու նոյն՝ և նման ուրիշ գործոց, որով միայն եւ մեր աշխատութիւնը պիտի վարձատրուի:

### Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ



## ԱՆ. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ<sup>1)</sup>

ԽՄԲԱԳԻՐ ՅՕՐԻՆԵԱԼ Յ' Է ԴԱՐՈՒ

Ի

Հ Ն Ա Գ Ո Յ Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ո Յ Յ



ՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՑ 2). — Աղամ<sup>1</sup> նախաստեղծն,  
սա կեցեալ ամս երկրիւր և երեսուն՝ ծնանի զՄէթ:  
Եւ եկեաց ամս եւրե հարիւր, միճէւ ի հարիւր եւ հիճզ ամս Մաղա-  
ղայէլի: Մէթ<sup>2</sup> կեցեալ ամս երկերիւր և հինգ՝ ծնանի զԵնովս. և եկեաց  
ամս ԶԵ, միճէւ ի քսան ամս Ենովրայ: Սորա երկուքն յարձա-  
նագրութեանցն՝ ընդէմ երկուց հանդերձելոցն, որպէս ասէ Յովլ-  
ուեպս ՅԵ. Թեսէտե ուրին անյայա է: Ենովս<sup>3</sup> որ առաջին յուսացաւ  
կոչել զԱստուած: Եւ ընդէր արդեւք այս, և կամ վասն որմէյ  
պատճառանց նախն է ասացեալ կոչելոյն զԱստուած. կամ

1. ԶՈ. Ծնունդը Յարամայ և բիւր նոցին: Աղամ եկաց ՄԼ  
» ամ, և ծնաւ զՄէթ: 2. Մէթ ամս ՄԵ՝ միաւրեայ. և  
» լինի ՆԼԵ: 3. Ենովս ՃՊ. ՌԻԵ:

1). Սոյն Խորագիրը մենք գրինք, զի բնագիրն առանց Խորագրի էր:

2). Այս վերնագրովս կը սկսի բնագիրը: Դիսելով՝ որ Աղամէն կը սկսի, աւ չենք կարող կասկածել՝ որ պակասաւոր ըլլայ սկիզբէն: Գուցէ ի սկզբան հակերձ յառաջաբան մալ ունեցած ըլլար, զոր յետոյ հաւաքողք եւ ընդօրինակողք դուրս թողած են. և կամ հեղինակին ուրիշ գրուածի մը կը յաջորդէր, իբրեւ շարայ-  
րութիւն:

3). Իրօք Աէթեան արձանագրութեան վերաբերեալ այս հասուածս կը գտնուի  
Յովսեպսի քով (Հնախօս. Գիրք Ա. գլ. Բ.) աւելի մանրամասնորէն. բայց երա-  
յեցի հնախօսը չի նշանակեր իր ազրիւրն, ուսկից առած է: Ամսկեղզս (Chrono-  
logia, ed. Bonae, p. 29) Բերոսոսի քաղեւացոյ և Մանեթոնի գրուածներէն յա-  
ռաջ եկած կը կարծեցնէ, ըսելով. «Qui duabus tabulis infra locandis, men-

որպէս կոչելն իմանի: Քանզի Ազամ ճշմարտութեամբ ասառածասաեղն, և ի բերանոյ Աստուծոյ առեալ ասի պատուէր. այլ և յանցուցեալ և ի թաքստեան եղեալ, զՈւր եսն յԱստուծոյ՝ և ոչ յայդ ումեքէ հարցանի: Սապէս և զվճիր վարկին ի նմին բերանոյ լսէ. իսկ յեաոյ և Արէլ մերձաւոր և ծանաւթ Աստուծոյ լեալ պատարագ մատացանէ, և ընկալեալ լինի:

Արդ՝ սոցա այսպէս ընդունելութեան և ծանաւթութեան Աստուծոյ լինել, է՞ր աղագաւ առաջին սա ասի կոչել զԱստուծ, և այս յուսով: Այլ զայդն վասն սորա ի անսութեանց՝ ի հրաւիրեալսն մեր յուղարկեսցուք տեղի. իսկ որ առձեռն պատրաստն է ասասցուք: Քանզի ի պատուիրանազանցութեան գտեալ առաջինն ի մարդկանէ՝ ի զրախոչն և յԱստուծոյ՝ չարութեան աղագաւ, որպէս ասացեալ է, գտանի արտասահմանեալ: Զկնի եւ ընտանեցինն Աստուծոյ՝ յորդոցն Ազամայ՝ ի հարազաէն խրմէ սպանանի յեղբաւրէ: Յետ որոյ՝ ոչ բանիւ ինչ ասառածայնոյ, և ոչ յայնասութեան ինչ իրիք եղելոյ, ի տարակուսանս և յանյուսութեան ազգ մարդկան համարեալ լինի. այդ և ինքնահմանց արդարեւ գործս. յորոց միջի սա քաջայոյ եղեալ՝ ուղղութեամբ հանդերձ՝ կոչէ զԱստուծ: Իսկ կոչելդ կրկնակի իմանի. կամ անուանել որպէս մոռացեալ, կամ յաւզնականութիւն կարդալ: Արդ՝ անուանել որպէս մոռացեալ՝ ոչ է ի գէպ. զի ոչ բազմութիւն ամաց ընդ մէջ, որ ի մոռացումն նոցա զԱստուծու ածէր անունն, և կամ զնոյն ինքն որոյ անունն. և ոչ զարձեալ մահու և թաղման գեռ ևս յԱստուծոյ ստեղծեալն հասեալ է: Ապա ուրիմն յափնականութիւն կոչէ սա զԱստուծ:

Սա կեցեալ ամս ձՂ, ծնանի զկայինան: Եւ եկեաց ամս ՁՁԵ, մինչեւ ի ՃԳ. ամն Մարուսաղյի:

tem attentius adiecerit duorum istius modi scriptorum, quos memoravimus commentitiam scriptionem, Berosi dico et Manethonis»....

Դիտելով որ Յովսեպոսի այս տեղին Եւսեբիսոի քով չկայ, կը հետեւ՝ որ Խորենացին ուղարկի Յովսեպոսէն առած է զայն. այսպէս նաեւ Աբգարու կոսջ Հեղինէի և ուրիշ նիւթոց վերաբերեալ այն մանրամանութիւնքը, որոնք թէեւ աշերս ունին Եւսեբիսի հետ՝ բայց անկէ կը տարբերին ուրիշ պարագաներով: Երկորդ՝ դիտելու արժանի կէտ մէւ և այս. այսինքն թէ Աբսկեղզոսէն յառաջ ապրած և գրած է Խորենացի իր Պատմութիւնը, ապա թէ ոչ անոր ծանօթ պիտի ըլլար, և հարկէ, յան մամանակազրին՝ Յովսեպոսի յիշեալ տեղւոյ մասին տուած մեկնութիւնը, եւ նա կուած կը լար զայն, կամ ըստ այնո՞ւ բացատրած:

Կայնան<sup>1</sup> կեցեալ ամս ձՀ, ծնանի զՄաղաղայէլ. եւ եկեաց ամս ՁԽ, մինչեւ ՁՂ. ամն Ղամեքայ:

Մաղաղայէլ<sup>2</sup> կեցեալ ամս ձՂԵ, ծնանի զՅարել. եւ եկեաց ամս ՁԼ, մինչեւ ԽԲ. ամն Նոյի:

Յարել<sup>3</sup> կեցեալ ամս ձՂԲ, ծնանի զԵնովը. եւ եկեաց ամս Ղ, մինչեւ ՄՉ. ամն Նոյի:

Ենովը<sup>4</sup> կեցեալ ամս ձՂԵ, ծնանի զՄաթուսաղայ. եւ եկեաց ամս Մ մինչեւ ԼԳ. ամն Ղամեքայ, և հաճոյ եղեալ Աստուծոյ փոխի: Սա յետ ծնանելոյ զՄարուսաղայ ամաց Մ.ց՝ արժանի եւ հաճոյ վարս սատցեալ, որպէս զիսէ որ համեցաւն, փոխեալ լինի ի միջոյ ամփարշտաց. զորոյ զպատճառն յետոյ հատուցուք:

Մաթուսաղայ<sup>5</sup> կեցեալ ամս ձՂԵ, ծնանի զՂամեք. եւ եկեաց ամս ՂԲ, մինչեւ Ո. ամն Նոյի. և անդէն իսկ առ ցրենդէ վախանեցաւ:

Ղամէք<sup>6</sup> կեցեալ ամս ձՂԲ, ծնաւ որդի, եւ անուանեաց զանուն նորս Նոյ: Եւ եկեաց ամս ՃՂԵ, մինչեւ ի ՃՂԵ. ամն Նոյի, և մեռաց ցրից ամաւք յառաջ քան զՄարուսաղայ հայր իւր:

ՎԱՅՆ ՆՈՅԻ. — Եւ ընդէր արգեւք զսա միայն որդւոյդ անուանի յորջորջեաց, իսկ վասն այլոցն ամենեցան պարզաբար ասաց՝ թէ ծնան. զորմէ ընդիմ իմն մարդկանայ հայրն. Սա, ասէ, հանգուսցէ զմեղ ի գործոց, և ի տրամութենէ ձեռաց, և յերկրէ՝ զոր անէծ տէր Աստուծ. որ եղեւ ոչ հանդիսա, այդ չնջումն որ ինչ միանդամ ի վերայ երկրի: Ինձ թուի, հանդուցանելն՝ զաղարեցուցանել. իսկ զաղարեցուցանելն զամպարշաութիւնն և զշարիս՝ սատակմամբ մարդկան երկրագործաց 1) գարուն երկրորդի: Քանզի զեղեցկաբար ասաց, թէ ի գործոց մերոց, որ է յանաւրենութեանց, և ի տրամութենէ ձեռաց՝ որովք կատարեմք զպրդութիւնն: Բայց արգարե հանգչին ըստ այսմ մարդկանութեան ոչ ամենեքեան, այդ կատարեալըն յատարինութեան ոգիք. յոր-

1. ՁՈ. Կայինայն ձՀ. 2. Մաղաղայէլ ձՂԵ. Ձկ:

» 3. Յարել ձՂԲ. ՈՃԻԲ: 4. Ենովը ձՂԵ. ՈՄՂԵ:

» 5. Մաթուսաղայ ձՂԵ. ՈՒԾԲ: 6. Ղամեք ձԲ. ՈՈՂԻ:

1). Մ. Խոր. Ա. գլ. Գ. ունի ուղեղը «զաղարշործաց»:

ժամ՝ չարիք՝ իբրհ հեղեղաւ ջնջեալը մաքրին, իբր առ Նոյիւ մուշեալըն ի չարիս։ Խոկ որդւոյդ անուամբ՝ մեծարեաց զնա զիր, իբրհ զյայտնի և զնշանաւոր, և զարժանի ժառանդ հայրենականացն ժառանդեան։

ԱՆԴԻՇԱՋԻ. — Նոյ<sup>1</sup> եղեալ ամաց հինգչարիսը՝ ծնաւ երիս որդին՝ զՄեմ, զԲամ, և զՅարեթ. և յետ հարիւր ամի ծննդեանն Անմայ՝ եկն ջրհեղեղն յամի վեցհարիւրորդի կենացն Նոյի, և կարաւ զերկիր ամ մի։ (Եւս. Ք. Ո. էջ 128)։ Եւ առնին յԱզամայ մինչ ի ջրհեղեղն ազգը տասն (Հիոլ. 11), ամք ԱՄԽԻՇ (Հ. 2242)։

Եւ եկեաց Նոյ յետ ջրհեղեղին ամս ՅՇ, մինչեւ Զ. ամն Երերայ։ Եւ այս են ծնունդք Անմայ։ Անմ<sup>2</sup> էր ամաց ՃԲ (Հ. 100), ծնաւ զԱրփաքսադ յերկրորդում ամին յետ ջրհեղեղին։ Եւ եկեաց ամս Շ, մինչեւ ի Ճ. և Ա. ամն Փաղեցայ։

Արփաքսադ<sup>3</sup> եղեալ ամաց ՃԱՅ՝ ծնանի զկայինան. և եկեաց Կայինան<sup>4</sup> ամս ՅԼ, մինչեւ Ապազյ<sup>5</sup>։ (Ապազյ) եղեալ ամաց ՃԼ, ծնաւ զԵրեր. և եկեաց ամս ՆԶ, մինչեւ յերենրորդ ամն Ալերորայ։

Երեր<sup>6</sup> եղեալ ամաց ՃԼՒ, ծնաւ զՓաղեդ. և եկեաց առ նոյլաւ ամս ՆԳ, մինչեւ ԼԲ. ամն Կարովրայ։ Առ սոյլաւ<sup>7</sup> (Փաղեգաւ) ասի լինել բաժանումն յեզուացն, վասն զի և Փաղեգ՝ լսու Երբայեցոց բարբասոյն՝ բաժանումն կոչի։ (Եւս. Ո. էջ 188)։ Եւ առնին ի ջրհեղեղին մինչ յՓաղեդ ազգը հինգ, ամք ՇԻԵ (Հ. 529)։ Եւ յԱզամայ՝ ազգը հոդեատասն, ամք ԱԶԿԵ (Հ. 2771)։

Բաժինք երկրի յերից որդւոյն Նոյի, յետ ջրհեղեղին, Անմայ, Քամայ, և Յարեթի, և բաժինք ազգաց նոցա. և առնին սահմանք նոցա, Անմայ անզրանկանն Նոյին ի Պարսից և ի Բակարինէ մինչ ի Հնողիս. և ձգին մինչ յՈՒնոկորոն։ Եւ Քամայ երկրորդի որդւոյն՝ յՈՒնոկորուրայ մինչ ի Պարկերովն, կողմն հարացոյ։ Եւ Յարեթի՝ երրորդի որդւոյնի Մարաց մինչ ի Պազերովն կողմն հիւսիսային։ Եւ Յարեթի՝ զետք դիլամական մուգ կամական մեկնէ Ընդ Մարս և լուսական մուգ կամական։ Եւ Անմայ՝ զետք մասնական մուգ կամական։

1. ԶՈ. Նոյ՝ Շ. ԱՃԱՐ. 2. ՍԿԵՄ՝ Ճ. ԱՄԼԳ. 3. Արփաքսադ՝
- » ՃԱՅ. ԱՅՀԱՅ. 4. Կայինայն՝ ՃԼ. ԱՇԱՅ. 5. Ապազյ՝
- » ՃԼ. ԱՅԼԱՅ. 6. Երեր՝ ՃԼՒ. ԱՉԿԵ. 7. Փաղեգ՝
- » ՃԼ. ԱՊՎՅ.

Եւ ԱԲԱՄԱՅ՝ զետք գեհնովն, որ կոչի Նիղոս։ Եւ որ խառնակեցան լեզուք յետ ջրհեղեղին՝ էին եւթանասուն և երկու։ Եւ որ զաշտառակն շինէին՝ այն ազգը և նոր լեզուքն ընդ ամենայն երկիր սփուցան։ Եւ Ներբովիթ սկայ՝ որդի Քուշայ եթովպացի՝ որոսյր նոցա երէ առ ի կերպակուր բաւականի։

Եւ այս անուանք են եւթանասուն և երկու ազգացն։

Որդիք Յարեթի, երրորդի որդւոյն Նոյի, Գամեր, և ի նմանէ Գամիրք. . . . Մագովիք՝ և ի նմանէ կեղաք և Գաղատացիք. և Մարայ՝ և ի նմանէ Մարք. Յաւան՝ և ի նմանէ Յոյնք և Հեղդէնք. Թորէլ՝ և ի նմանէ Թեստաղք. Մոսոր՝ և ի նմանէ (Հիալ. Illirii, Theras a quo) Թրակացիք. Քիամիմ և ի նմանէ Մակեդոնացիք։

Եւ որդիք Թիբրասայ՝ (Հիալ. et filii Gomer) Առքանաս, և ի նմանէ Սարմատք. և Բիփաթ՝ և ի նմանէ Սաւրոմատք, և Թորգոմ՝ և ի նմանէ Հայք. և որդիք Յաւանայ՝ Եղիսա, և ի նրամանէ Սիկեղացիք և Սրենացիք. Թաշշէ՝ և ի նմանէ Վիրք և Տիւրենացիք. Կիախա՝ ուստի Հոսոնք, և Ղատինացիք, և Ուզացիք։ Բնդ ամենայն ազգը հոդեատասան։

Եւ ի սոցանէ ելին մեկնեցան կղզիք հեթանոսաց, որ են կիւլրացիք՝ ի կիախացւաց, որդիք Յարեթի։ Բայց գարձեալ զանանեմք և յայնոցիկ՝ որ են ի կողմանս հիւսիսոյ, որ ազգակից են կիախացւոցն։ Եւ ազգըն որ են ի Հեղաս աշխարհի՝ յայնցանէ են, որք յետոյն փոխեցան անլոր, որպէս Սայհատացիքն, որ բնակեցան յՈՒնու քաղաքի պատուականացն Յունացն, և Թիւրեացիք։ Սիկովնացիք ելին և պանդխացան, որ են ի Կաղմեայ որդւոյ Ագենովրայ. և Կարքեղովնացիք, որ են եկր ի Տիւրոս (Sync. Chrom. ed. Bonae, p. 92). և ելթէ այլք ևս իցեն, որ սոյնակէս յետոյ փոխեցան. և յԵղադաս։ Բայց ուսանիմք զնշմարտութիւն սոցա յաւրինաց և ի մարգարէից։ Ալո՛ ելին, ի խառնակել լեզոււացն, ազգը հոդեատասան. և ունին ազգըս այսուքիկ՝ որ ելին Յարեթէ, ի Մարաց մինչ ի Սպերիսն (Հ. Vesperum), որ ձգին մինչ յՈՒնոկորոն, և հային ընդ հիւսիսի։ Մարք, Ալուանք, Լիյիմք, Աղամք (Հ. Gargani, Arrei), Ամազնք, Ճիղքք, Մարտորքք, Հայք, Վիրք, Եղերացիք, Խաղուիք, Գամիրք, Պափազնացիք, Մարիանովէնացիք, Թիւրաբնացիք, Վաղիւկանացիք, Մարիանովէնացիք, Վարիանացիք, Կողբացիք, Մեղանք, Պարագիք, Սաւրոմատք, Մենլատացիք, Սկիւլատացիք, Սկիւլացիք, Տաւրացիք, Թրակացիք, Կաստանացիք, Խղիւրիւկացիք, Մակեդոնացիք, Յոյնք, Ղերացիք,

Խարացիք, Հոնք, Դաշնացիք, Յաղիւզացիք, Կաղաբրացիք, Ովելկացիք, Ղատինացիք, որ են Հոսոմք. Տիւրենացիք, Գաղինոսք, Կեղաք, Ղիգսիանոսք, Կեղափերք... Գաղիացիք, Ակիտանացիք... Ղիսիանացիք, Վակիացիք, Կիւնացիք, Բրիտանիկեցիք, որ ի կղզին բնակեալ են :

Եւ այս ազգը են՝ որ զիտեն ի սոցանէ գլուռթին։ Իրերարացիք, Ղամինացիք՝ որով Հոսոմք վարին. Մատնիացիք, Յոյնք, Մարք, Հայք, որ են սահմանք սոցա ի Մարաց՝ ընդ կողմն հիստոսյ մինչև ի Գաղիրով։ Եւ ձգին ի Պաւտամիով գետյ մինչև ի Մառուխա (Հ. Mastusia dilion), որ է Խիսն։ Եւ այս ազգը եւ երկիրք են նոցա:

Արտպատական (Հ. Media), Ազուանք, Ամազոնիա, Հայք մհծք եւ փոքրնք, Կապակուիա, Պափագոնիա, Գաղատիա, Կողքիս, Հնդիկք, Բոսպորիա, Մեռովուս, Գեուխ, Մարմատիս, Տաւրինիս, Սաւրինիս, Սաշրումատես, Ակիւթիս, Ետողիս, Ատափիկ, Աքարենք, Հնդիւրիս, Դիրիսիս, Պաղպանիսսաս, Ակարենք, Հէպիրուտիս, Խիլիւրիս, Ղիրենիտիս, Ազրիակէ, յորմէ ծովն Անդրիական։ Գաղիս, Ղիսիտանիա, Խաղիս, Թոսակենէ, Մասաղիս, Կեղափիս, Պամանիս, Իրերիս, Սպանգադիս, Իրերիս, Սպանիա մհծք։ Աստ սպատին սահմանքն Յարեթի՝ մինչև ի կղզիս Բրիտանիկեցւոց, եւ Հային ամենեքին ընդ հիստոսի։ Եւ այս են կղզիք նոցա։ Սիկեղիս, Բրիտանիս, Կիրիշա (Հ. Eubœa), Ոտքոս, Քիոս, Ղեսրոս, Կիթերա, Զակիւնթոս, Կեփաղենիս, Իթակէ, Կորկիւրա, և Կիւզպէս։ և մասն մի յԱսիա՝ որ անուանեալ կոչի Յովանիա (Հ. Jonia). և գետն Դկղաթ մեկնէ ի մէջ Մարաց և Յարիզով։ Այս են սահմանք Յարեթի։

Որդիք Քամայ՝ Քուշ, և ի նմանէ Եթովպացիք. Մեստրայիմ՝ եւ ի նմանէ Եզիպատացիք. Փուգ, և ի նմանէ Տրոզզացիք ծակամուրք, Քանաան, և ի նմանէ Ափրիկացիք և Փիւնիկեցիք։ Որդիք Քուշայ՝ Սարա, և Ելփաթ, և Սաբեկաթա, և Հաեգամայ, և Սաբաթա։ Եւ որդիք Հաեգամայ՝ Սարա, եւ Յուղադան (Հ. Dardan)։ Եւ Քուշ ծնաւ զՆերբովլիք։ Եւ Եզիպատացիք՝ Հանդիերձ Մեստրայիմաւ Հարքն իւրեանց ամնին ութ. Քանզի ասէ, թէ Մեստրայիմ ծնաւ զՊապիիմ, և ի նմանէ ծնան Ղիւգացիք. և զՆիշիմ (Հ. Enemim, և ի նմանէ Պամիկիւզացիք. և զՂաբաթիմ, և ի նմանէ Ղիրիացիք. և զՆեփրադիմ (Հ. Neptoim), եւ զՊատրոսնիմ, և ի նմանէ Կրիտացիք. եւ զԲենացիք (Հ. Aethiopum) գետն ելանէ. Եւրիմրա՝ որ է Կարմիր ծով, որ Հայի ընդ արկելս. Թերայիս, Դակիացիք, յորմէ ելին Փղատացիք, և զԲանարփրորիիմ, և ի նմանէ

Ամենայն ազգը Քանանացւոց՝ Հանդերձ Քանանաւ հարբն իւրեանց երկուասան. քանզի ասէ, թէ Քանան ծնաւ զԱլումին կար, և ի նմանէ Ալումիւացիք, և զԲետացիս, և զՅերուացիս, և զԱմովրացիս, և զԳերգեսացիս, և զԽեռացիս (Հ. Euneum), և զԱրուակացիս. և ի նոցանէ Տրիպողիսք, և զԱսենացիս, և զԱրագիսն ի նմանէ Արագացիք. և զԾամրիմ (Հ. Samareum), և նմանէ Արրուեցիք. և զԱմաթի, և ի նրամանէ Ամաթուսեցիք. ընդ ամենայն ազգը երեսուն և երկու. եւ է բնակութիւն նոցա յՌինիկորտրայ մինչև ի Գաղերովն, որ է ընդ հարաւակողմէ։

Եւ այս ազգը են՝ որ ծնանին ի նոցանէ։

Եթովպացիք, Տրոզզացիք ծակամուրք, Առացիք (Հ. Aggei), Ասուակիմուպ, Խարբինացիք, Ակներք Հեղեճացիք, Եղիպատացիք, Փիւնիկեցիք, Ղիրիացիք, Մարմարիկացիք, Կարացիք, Փիւխացիք, Միւսացիք, Մոսոնիկեցիք, Փոխգացիք, Միքունացիք (Հ. Magones), Բիւթիւնացիք արևմտականք, Նոմագացիք, Ղիկիացիք, Մարիանցնացիք, Պամիկիւզացիք, Մեսիչզացիք (Հ. Minesci) Պիսիդացիք, Աւգադիկացիք, Կիութիեցիք, Մարփիսացիք։

Եւ այս ազգը են՝ որ ծնան ի նոցանէ։

Կրիտացիք, Մագարացիք, Նոմագացիք, Մակրոնացիք, Եսամատենացիք (Հ. Nasamones). սոքա ունին յԵղիպասսէ մինչև ցՈկիւնոսու։

Եւ այս են կղզիք նոցա։

Եպիշիկիւնիա, Խրակորսուտա, Ղիւպանգուսա, Գամեզոս (Հ. Agaudius), Մեղիսէ, Կերկիւնա, Մենիզա, Սարոնիէ (Հ. Cardinia), Գաղատէ, Գարսինա, Կրեսէ, Գարոս, Ղեզէ, Թերա, Կարէաթոս, Ասափաղենս, Քիոս, Ղեսրոս, Տենիսոս, Իմբրոս (Հ. Imbrus), Իցարոս, Սանոս, Կովաս, Կոփաս, Նեսիւրոս և Կիսպրոս մեծ կղզի։

Եւ որ զիտեն ի սոցանէ գլուռթիւն՝ են այսոքիկ։

Փիւնիկեցիք, Եզիպատացիք, Պամիկիւզացիք, Փոխգացիք. և են սահմանք Բամայ յՌինիկորտրայ, որ մեկնէ զԱսորիս, և զԵթովպէ, և ձգին մինչև ի Գաղիրովն (Հ. Garira)։

Եւ այս են անուանք աշխարհաց նոցա։

Եղիպասս, Եթիսվալէ, որ Հայի ընդ Հնդիկս. և միտ և Եթիովպէ յորմէ Քուշացւոց (Հ. Aethiopum) գետն ելանէ. Եւրիմրա՝ որ է Կարմիր ծով, որ Հայի ընդ արկելս. Թերայիս, Դակիացիք, յորոց և լին Փղատացիք, և զԲանարփրորիիմ, և ի նմանէ

Ղիրիկ (Հ. Thebea Libyae), որ ձգի մինչև ի Կորկիսրենս, Ասման'րէս, Ալւրտիս, յորում բնակեալ են ազդք քսան Աւովեացոց (Հ. Nazamonas), Մակասք, Տաւտամէացիք, Լիսք՝ որ ձգի ի Ղիպեայ մինչև ի փոքր Ալւրտէսս. Նումիղիտ, Մեսորիխ (Հ. Masseria), Մաւրիտանիա, որ ձգի մինչև յարձանն Հերակլիայ, որ կայ դեմ յանդիման Գապերտիք (Հ. Heracleites Stalas), և որ առ ծովելերք գաշասուն ունի, որ են ի հիւսիսյ՝ զլիզեկիա, զՊամիւլիա, զՊիսիլիա, զՄիւլիա, զՂյոնեշինա' (Հ. Lycaoniam), զՓաւալիա, զԼամազիա, զԼսկիա, զԼարիա, զՄւս և զՄիւսիա, զԾրավակա, զՌլղիրա, զԲիրիեիա (Հ. Bityniam Veterem), զառաջին Փուշգիս:

Ունի և կղզիս զԱպրովեիա, զԼրէտէ, զԼիւպրոս, և զգեան զեհովիս, որ անուանեալ կոչի Նիզոս, որ մէկնէ ի մէջ Քամայ և Յարեթի, սկիզբն Երեկորեայց ծովուն, այսինքն է ծով Արեմափց կոչեցեալ: Այս են ազդք Քամայ:

Երէց որդին Նոյի Սեմ. և ի Սեմայ են ազդք քսանէհինգ, որ բնակեցան յարեելո. որդիք Սեմայ՝ Եղամ, և ի նմանէ Եղամացիք \* . Ասոր, և ի նմանէ Ասորեստանեայք. Արփաբսապ՝ և ի նմանէ Քաղզեացիք և գիտեալ (Հ. Lydii). Դուշ՝ և ի նմանէ Դազովացիք. Արամ՝ և ի նմանէ Եսաւացիք առաջինք: Զասսա կոսորեաց Արբահամ: Եւ որդիք Արամայ՝ Ովս և Ուդ (Հ. Oscevi), և ի նմանէ Դիլացիք և Գամթեր (Հ. Gart), ի նմանէ Գասպենացիք. և Մոսոր՝ և ի նմանէ Մասենացիք:

Եւ Արփաբսապ՝ ծնաւ զԱպա. Սազա ծնաւ զԵրեր, և նըմանէ Երբայեցիք. և Երերեայ եղեն երկու որդիք. Փաղեց՝ (Հ. et Deboe) ի նմանէ կարգի ազգն Արբահամու: Եւ (Հ. Tactem et) Յեկտան ծնաւ զԵրմավդապ, ի նմանէ Հնղիկը: Սաղեփ, ի նմանէ Բակարիանսոք, և զԱսրամովթ, ի նմանէ Արարացիք. և զԵրդրամ (Հ. Duran), ի նմանէ Երամեղացիք. և զԱգովիս (Հ. Derra), ի նմանէ Արարացիք (Հ. Mardii). զԵրեղ, ի նմանէ Արփանացիք. և զԴէկղամ, ի նմանէ Կէլրուսացիք. և զԳերազ, ի նմանէ Ակիւթացիք (Հ. priores). և զԱրփիմեկը, ի նմանէ Վրկանիք. և զԱրպաթ, ի նմանէ Արարացիք առաջինք. և զՌլփիր, ի նմանէ Արամացիք (Հ. Armenii). և զԵփզաթ, ի նմանէ Գիմնոսոփիսացիք, որ կոչի Ալերկիմաստակը: Ամեներեան սոբա յերից որդւոցն Նոյի, ազգի եւթանասուն և երկու:

\* Լուս. «Խուժիկը»:

Եւ է բնակութիւն որդւոցն Սեմայ ի Բակտրոնէ մինչև յՈՒհնիկորուրայն, որ մեկնէ ընդ Ասորիսկ և ընդ Եղիպտոս և ընդ ծովն Կարմիր, ի բերանոյ ծովուն՝ որ է յանդիման Ասինեայ. այսինքն է Հնղիաց աշխարհին:

Եւ այս ազգք են որ եղեն ի նոցանէ.

Հերքայեցիք՝ որ են Հրեայք, Պարսք, Մարք, Պայկաստան, Ասորեստանեայք, Վրկանիկը, Հնղիկը, Տապրիկը (Հ. Macardi), Պարթեւք, Գերմակացիք (Հ. Germai), Քրամացիք (Հ. Helymei), Քուչանը (Հ. Cessei), Արարացիք առաջինք, Կեղարք, Ակիւթացիք, Արարացիք (Հ. ultra), Գիմնոսոփիսացիք՝ որ կոչի Մերկիմաստք: Եւ ձգին բնակութիւնք սոցա մինչև յՈՒհնիկորուրայն և ի Կուղիկիա:

Եւ այս ազգք են ի սոցանէ որ զիսեն զպրութիւն.

Երրայեցիք՝ որ են Հրեայք, Պարսք, Մարք, Պաղեացիք, Հնղիկը, Ասորեստանեայք: Եւ է երկայնութիւն բնակութեան որդւոցն Սեմայ՝ ի Հնղիաց մինչև յՈՒհնիկորուրայն, և լայնութիւն ի Պարսից եւ ի Բակտրոնէ մինչև ի Հնղիկս: Եւ այս են անուանք աշխարհնաց (Հ. gentium) նոցա. Պարսք՝ հանդերձ ազգաւրե որ շուրջ զնոքարք են Տապրիկը (Հիպ. Bactrianæ), Վրկանիկը, Բարիւլոն, Կորպուք (Հ. Corbulia), Ասորեստան, Միջագետք, Արարիա առաջին, Եղամ, Հնղիկը, Արարիա փառաւոր, Իրդմէ Ասորաց (Հ. Cælessyria), Կումազենէ, և Փիւնիկէ որ է որդւոցն Սեմայ: Եւ ընդ ամենայն ազգք երից որդւոցն Նոյի եւրանաւուն և երկու:

Եւ ազգք՝ որոց ընտրիմ ի միմեաց յեզուք, են այսոքիկ.

Երրայեցիք (Հ. et Judei), Ասորեստանեայք, Պաղեացիք, Պարսք, Մարք, Արարացիք, Մակիանացիք, Աղիբենացիք, Տապրիսք, Հնղիկը, Քուչանը՝ որ են Եթիոպացիք (Հ. Libyes), Եղիպտացիք, Ղիւրէացիք, Քետացիք, Քանանացիք, Փերեղացիք, Խեւացիք Ամովրացիք, Գերգեսացիք, Յերուսալամացիք, Եղովմայեցիք, Սամարացիք, Փիւնիկեցիք, Ասորիք, Կուղիկեցիք՝ որ են Տարսացիք, Գամիշիք, Հայք, Եղերացիք, Վիրք (Հ. Librani), Ակիւթացիք, Կողքեցիք, Խաղուիք (Հ. Sanni), Բասպորացիք, Ասինացիք, Սաւրացիք Ղիւկառիւացիք, Պիսիկացիք, Գաղատացիք, Պափազացիք, Փոփազացիք (Հ. Achai, Thessali, Macedones, Traces), Միսեցիք, Բեսիւացիք, Պարպաւացիք, Մարմանացիք, Գերմանացիք, Պանոնացիք՝ որ են Պէովացիք,

Նովրիկեցիք, Դաղմասաք, Հոսոմք՝ որ են Ղատինացիք, Ղիզրացիք, Գաղիացիք՝ որ են Կեղանացիք, Ակւանացիք, Բրիսանացիք, Սպանիացիք՝ որ են Տիւրենացիք, Հոնք, Մաւրացիք, Բակուացիք, Դեղուացիք, Սեղեկացիք, Ափրեացիք, Մավլիացիք, Գարմանք՝ որ են Բերեղացիք (Հ. Marmaredæ), որ երկայնեալ ձգին մինչև յեթիսլալէ:

Լաւ համարեցայ համառաւտիւ ցուցանել, և վասն եկաց ազգաց՝ որ գնացին յիւրաքանչիւր բնակովինէ, և չողան բնակեցան յաւտար տեղիս ուրեք ուրեք:

Եւ արդ սկսանիմք յարեւելից. ի Պարսից և ի Մարաց չողան բնակեցան ի Պարթես. և ազգին որ շուրջ զնոքաւը են՝ չողան հասին մինչև ի կողմանս Ասորոց: Եկք Արաբացոց՝ Արարացիք փառաւոք, քանզի այսպէս անուանեցաւ Արարիս Փառաշոր: Եկք Քաղղեացոցն՝ Միջազետեայք: Եկք Մազիանացոց՝ Ախեզողպիսաք, Տրոգլացիք ձկնկերք, և ազգս Յունաց\*, որ ունին անուանս հինգ՝ Յունիպէս, Արկանիքս, Բրիովտացիք, Եռացիք, Ղակոնացիք: Եւ եկք սոցուն են այսոքիկ. Պանտացիք, Բւժանացիք, Ապանիացիք, Տրոլացիք, Ասիանացիք, Կարացիք, Ղիւկիացիք, Պամիրալացիք, Կիւրենացիք, և կղզիք բազումք, որ ունին զՄիրառվական համաստարածն: Եւ ի սոցանե կղզիք մետասակ շուրջ գծովուն որ կոյի Հետումիւրտոս: Եւ են այսոքիկ. Անգրոս, Դենոս, Տենումին (Հ. Tenoremteo), Եաքսոս, Կեռոս, Կիրոս (Հ. Gyarus), Դեղոս, Ահեփինոս (Հ. Fynus), Ռենեկիւրենոս (Հ. Renea, Curnos), Մարաթոն: Եւ այդ ևս կղզիք մեծամեծք երկոտասան, յորս և քաղաքք բազում բնակեալ են, որ անուանեալ կոչին Սպորազէս, այսինքն ցանք և ցիրք, յորս պանկատութեամք բնակեցան Յոյնք: Եւ են այսոքիք. Եւ բիտա, Կրմէս, Միկեղիս, Կիպրոս, Կովաս, Ամամոս, Բոմոս, Քիսոս, Թրասոս, Ղեմոս, Ղեսոս, Սամովլթրակէ: Եւ ի Բիուտացոց՝ Եւրիս, որպէս ի Յունացն՝ յունական քաղաքք վիշտասան. և են այսոքիկ. Կղազունէ (Հ. Cladiomena), Միւտիւզինէ, Փովիէս, Պրինէ, Երիւթրէ, Սամոս, Սահոս (Հ. Teos), Կողնիոն, Քիսոս (Հ. Cius), Եփսոս, Սմիւնա, Պերինթոս, Բւզանզիս, Քաղկելովս, Պոնտոս, և Ամիսոս, Եղեմերոս:

Հսովմայեցոց և Կիտիացոց ազգը և եկք են այսոքիկ. Թուուկք, Կիմեկեացիք (Հ. Emilienses), Պիսկենացիք, Կամպանացիք, Ապուղեսացիք, Կարարեցիք, Ղուկանացիք:

\* Լուս. «Եղեմեացոց»:

Ազգը և եկք Ափրիացւոց՝ Ներքենացիք (Հ. Lebdeni), Կինզացիք, Նումիտացիք, Նասանովեացիք (Հիպ. Saci): Եւ են կղզիք հինգ, յորս և քաղաքք հինգ. Սարոնիսա, Կորսիկիս, Գիրբակ (Հ. Girda) և Բենիսև (Benigga), Կերկինա, Գաղատէ:

Ազգը և եկք Մաւրացւոց. Ղուսինացիք, Մուսովենացիք, Տինզիացիք, Կեսարանացիք: Ազգը Ապանիացւոց՝ որ են Տիրենացիք (Հ. Tyrrani et Turrenorum, ուն ետ) Դէարակոննեացիք, Ղիսիսանացիք, Բետիկացիք, Աւրիգոնացիք, Բասկոնացիք, Կաղիւկեցիք, որ են Ուսպորացիք 1) (Հ. Astures): Այս են ազգը և եկք Գաղիացւոց՝ որ կոչին Արուռացիք, Ղուստենացիք, Բայոնիացիք, Սիկիոնացիք, Ուկիւնացիք, Արենացիք:

Ազգը և եկք Գերմանացւոց ևն այսոքիկ. Մարկենեացիք, Բերյինեացիք, Կիրուսադացիք, Ամոզիսացիք: Եւ ազգը և եկք Սարմատացւոց՝ Ամարսիսացիք, Գրեկացիք՝ որ կոչին Գրեկուացիք:

Եւ զայս ևս լաւ համարեցայ յայտ առնել քեզ զանդէտ կողմանս ամենայն ազգաց, և զլերինս անուանիս, և զդեսս երևելիս. որպէս զի և յայցանէ մի ինչ անտեղեալ գանիցիս:

Եւ արդ սկսանիմ ասել զազգացն, և առնեմ սկիզբն յարեւելից: Արույաստան (Հ. Adiabenici) և Տանկաստան (Taleni) անզը քան զԱրաբացիս են. Տաճիկն բուն (Հ. Atalenos) անզը քան զՏաճկաստան (Հ. Arabeam) է: Եւ Ազուանք անզը են քան զԴրունս Կասպից: Եւ Մեծն Մազիամ՝ ընդ որս մարտեաւն Մովսէս, է անզը քան զԼարմիր ծոլ (Հ. Mesopotamiam et). և Փոքր Մազիամ մերձ առ նա՝ սահմանակիցք են Եղիպատոսի, ուր թագաւորեացն Ռադուէզ (Հ. qui et Jothro) աներ Մովսիսի: Եւ անզը քան զԳամիլոս յաջմէ կողմանէ Հայք, Եղերացիք, Վիրք (Հ. Birrani), Կողքեցիք, Ակիւթացիք, Բոսպորացիք, Խաղուիք, Եսաացիք՝ որ կոչին Սանիացիք, որ ձգին մինչև ի Պոնտոս, ուր էր բանակն Ափսարովսայ, և Սերաստովովս, և Եսաւհանգիսան հիւսիսոյ (Հ. Ussilimen) և Փասիս գետ: Եւ հասանեն ազգըս այսոքիկ մինչև ի Տրապեզոնտ:

Այս են անուանք տասն և երկու լեռանցն անուանեաց. Լիբանան, Կաւկաս, Տաւրոս, Ատղաս, Պասնասոս, Ակիւթերոն,

1). Աստ պակասին ի հայն 5 տողք. այսինքն՝ անուանք կղզեաց և քաղաքաց Ապանիս:

Եղիկոն, Պարթենիսս, Մասիք (Հ. Nysa), Կուկաբանտսս, Պենիոլս, Աղիմզոս (Հ. Libanus):

Գետը մեծամեծք և անուանիք են քառասուն (Հ. 41). Հինոս՝ որ է Փիսովի. Նիզոս՝ որ է Գեհավի, Դկղաթ, Եւփրաս՝ որ է Ջրածանի. Խովրաման (Jordanis), Լիփիսոս, Տանայիս, Մէնոս, Եղիմանթոս, Հաղիս, Ասորպիս, Թւերմովոս, Երասիս (Հ. Erasinus), Իռոր գետ (Հ. Rius), Բալդրիսթենէս, Աղփիսս, Տաւրոս, Եւրոսս, Մէանգրոս, Երմոս, Աքսիս, Պիրամոս, Բլոս (Հ. Bajus), Երբոն, Սանգարիս, Քերոս (Հ. Achelous), Պաէսիս (Հ. Peneus), Եւենոս, Եղարքոս (Հ. Sperchius) 1), Լահիստոսս; Ախմոս, Ակամանգրոս, Մահշմոնէ, Պարթենիս, Խատրոսս, Ռենոս, Բեաչս, Ռոգանոս, Եւրիպանոս, Թիրրիտ՝ որ այժմ անուանեալ կոչի Տիբերիոս. Ընդ ամենայն քառասուն:

Արդ՝ վասն զի յայտ եղեւ վասն ազգացն՝ յերից որպւոցն Նոյի, որ ընդ ամենայն երկիր սփոնցան, թէ ով յումէ ծնաւ: Աեր՝ անդրանիկ՝ կալւու զկողմն արեելից. Քամ զկողմն հարաւոյ. Յաբեթ զկողմանս արեմտից և հիւսիսոյ:

Պարտ և պատշաճ է այսուհետեւ ընթանալ զհետ ամացն թուոց. Փաղէկ<sup>1</sup> եղեալ ամաց հարիւր և երեսուն՝ ծնաւ զթագաւ. Ուագաւ<sup>2</sup> եղեալ ամաց հարիւր երեսուն և երկոց՝ ծնաւ զՄերաք. Մերուք<sup>3</sup> եղեալ ամաց հարիւր եւ երեսուն՝ ծնաւ զՆաբովր. Նաբովր<sup>4</sup> եղեալ ամաց հարիւր և յեն՝ ծնաւ զթարայ. Թարայ<sup>5</sup>

1. ԶՈ. Փաղէկ՝ ձԼ. ՍՊԱ: 2. Ուագաւ՝ ձԼԲ. ԱԶԻԵ: 3. ԱԿ՝ բուք՝ ձԼ. ՎԿԻԵ: 4. Նաբովր՝ ՀԹ. ՎՃԼԶ: 5. Թարայ՝ Հ. ՎՄԶ:

1). Մինչեւ այս տեղ համեմատուած տարբերութիւններէն կը տեսնուի, որ Հեպսիլիսոսի լատ. Խմբագրութիւնը՝ տեղ տեղ աւելի կատարեալ է բովանդակութեան կողմէն, մինչդեռ հային մէջ կը պակսին: Սակայն վերջինս ընդհանուր էն անուանց ձեւագրութեան եւ տեղեկութեանց մէջ բնագրին — ուսկից թարգմանուած է — աւելի հաւատարիմ մնացած կ'երևի. և այս կողմանէ շատ աւելի հետաքրքրական է, բնագրի քննութեան և վերակազմութեան համար:

Հաւանական է՝ որ փակագծի մէջ գրուած տարբերութիւններէն ումանք՝ Դինդութիվի հրատարակութեան մէջ ուրիշ կերպ ըլլան. և ահա ասոր համար է, որ կը ցաւինք զանի ձեռքերնիս չունենալուն վրայ: Ցամենայն գեղամ՝ այսպիսի պարագայի մէջ իսկ մեր բարդատութիւնները դիւրութիւն պիտի ընծայեն զանիկակ բա դատակ ուղղողներուն:

եղեալ ամաց և թանասոնից՝ ծնաւ զԱբրահամ<sup>1</sup> էր ամաց և թանասոն և հնդից, ի ժամանակի իրրե հրաման ետ Աբրամած՝ եղանել նմա ի տանէ հարց խրոց, և զալ յերկիրն Քանանացոց: Արդ՝ առնին ի բամբացն երկրի՝ մինչև ի զալ Աբրահամու յերկիրն Քանանացոց՝ ազգը հինգ, ամբ ՈժԶ. և յԱգամայ՝ ազգը քսան, ամբ ՎՅԶԴԻ (Հ. 3387):

Բնակեաց Աբրահամ յերկիրն Քանանացոց ամս քսան և հինգ, և ապա ծնաւ զԽաչակի: Խաչակ<sup>2</sup> եղեալ ամաց վաթսուն՝ ծնաւ զՅակոբ. Յակոբ<sup>3</sup> եղեալ ամաց որտուն և եւրաց<sup>4</sup> (Հ. 86) ծնաւ զՂեսի. Ղեսի<sup>5</sup> եղեալ ամաց քառասուն և վեցից<sup>6</sup> (Հ. 40) ծնաւ զՂահամթ. Ղահամ<sup>7</sup> եղեալ ամաց վաթսոնից՝ ծնաւ զԱմրամ. Ամրամ<sup>8</sup> եղեալ ամաց և թանասոն՝ ծնաւ զԱհարովին. և յամին ութսներորդի երրորդի կնայացն Ահարոնին ելին սրպիցն Խարայէղի յերկրին Եգիպտացոց՝ ի ձեռն Մովսիսի<sup>9</sup> առաջնորդին խրեանց: Եւ առնին ամբ բնակութեան որպւոցն Խարայէղի յերկրին Եգիպտացոց՝ ամբ շրեքնարիւր (Հ. 470), և յանապատին<sup>10</sup> ամս քառասուն:

Յեսու<sup>11</sup> որպի Նաւեայ իրրե անց ընդ Յորդանան գետ, և կեաց յերկրին Քանանացոց ամս քսան և եւթն, և ի պատերազմունեմ՝ ամս վեց. յետ ժառանգեցուցանելոյ զերկիրն վիճակաւը՝ եկաց ամս քսան և մի (Հ. 20): Արդ՝ առնին, յորմէ հետէ եկն Ամրահամ յերկիրն Քանանու, մինչև ի մեռանելն Յեսուայ որդւոյ Նաւեայ՝ ազգը եւթն, ամբ Շ. և յԱգամայ՝ ազգը քսան և եւթն, ամբ ՎՅԶԴԻ (Հ. 3384):

Յետ մահուան Յեսուայ մեղաւ ժողովորդն, և մասնեցան Քառակեսայ<sup>12</sup> արքային Միջագետաց, և ծառայեցին նմա ամս ութ. և իրրե աղազակեցին առ Աստուած, յարոյց նոցա իշխան զԳութսնիէղ՝<sup>13</sup> զեղբայր Փաղերայ զկրասեր, որ էր ի ցեղէ Յուգայ: Սա մարտեաւ ընդ Քուսանայ, և սպան զնա, և տիրեաց ժողովրդեանն ամս քառասուն (Հ. 31): Յաւորս Սամելդարայ՝ Պոմիդես:

1. ԶՈ. Աբրահամ՝ Ձ. ՎՅԶԴԻ: 2. Խաչակ՝ Ա. ՎԿԻԵ: 3. Յակոբ՝ ՎԵ. ՎԵԾԹ: 4. ՂԿԻ՝ ԽԶ. ՎԿԻԵ: 5. Կահամ՝ Ա. ՎԱԿԻԵ: 6. Ամրամ՝ Հ. ՎՃԼԵ: 7. Մովսէ՝ Զ. ՎԵՍՈՒԿ՝ Զ. ՎՊՃԵ: 8. Յանապատն՝ Խ. ՎՊԾԵ: 9. Յեսու ՆԱՅ՝ ԵԿԱՅ՝ ԽԵ: ՎՊԶ: ՓԵՆԻԷՇ՝ ԽԻ. ՎՃԴԻ: 10. Քուսարա սագ՝ Ա. ՎՃԺԱՄ: 11. Գողոնիէլ՝ Խ. ՎՃՄԱ:

և. Պիմիրէս, Փիտոս, Աւաղաս, Գանեն'պտկս, Գեւկա'յիսէ ձահացին (Ափր. առ Ալիգեղղոսի, Chron. p. 391):

Դարձեալ մեղացիա՝ մատնեցան Եզդովմայ<sup>1</sup> արքայի Մովաբու, և ծառայեցին նմա ամս ԺԸ. և իբրև դարձան առ Աստուած, յարոյց նոցա իշխան զԱւովէ<sup>2</sup> յազգէ Եփրեմի, որ սպան զԵզդովմ, և տիրեաց ժողովրդեան ամս ութուուն: Յետ մահուան Նահովլայ մեղա ժողովուրդն, և մատնեցան Յարիսայ<sup>3</sup> արքայի Քանանացոց, ամս քսան ծառայեալ նմա: Ի սորա աւուրս մարդարէցաւ Դերովրա<sup>4</sup> կին Ազգիսովիթայ՝ յազգէ Եփրեմի. և ի նորա ձեռն տիրեաց, զաւրու, որդուցն Խորայէզի Բարակ՝ որդի Արենեիմայ (Հ. Aminoen), և ցեղէ Նեփթավէմայ: Սա մարտեաւ ընդ Սիսարայի սպարապետին Յարինայ, և յազմեաց նմա, եւ տիրեաց որդուցն Խորայէզի. եւ զատեցաւ Դերովրայ զժողովուրդն ամս քառասուն: Յաշուրս Դերովրայ մարդարէուրհուոյ՝ որ ընկ Բարակայ, որք ի Դիոսէ (Դիովորոսէ) վիստասեմին, ուստի Պիսկոս անուանեալն Զես, Կրոնայ ազգական, յարեւուսու բազացորեաց 1). որ ուներ դատերս Երովլումինու, Անտիոք, Աղինենէ, Սեղղենէ, Դանաույէ, Պերսէս, Եղեղա՛ կին Զետայ: Զետա՛ կենդանուրին կոյի, Երշիկա՛ աշր, վասն տուրեցաւ շեջոց:

